ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Մ. ՋԱՍԼԱՎՍԿԱՅԱ

# ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2011 - 2013 թթ.)

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Գ 888

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի*
*գիտական խորհուրդը*

**Ա. Գրիգորյան, Մ. Զասլավսկայա**

Գ 888 ԵՊՀ շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից. համեմատական վերլուծություն (2011 - 2013 թթ.)/ Ա. Գրիգորյան, Մ. Զասլավսկայա: -Եր., ԵՊՀ հրատ., 2015, 160 էջ:

Սկսած 2009 թվականից՝ ԵՊՀ-ում անցկացվում են շրջանավարտների՝ Համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցումներ, որոնք ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի կարևոր բաղադրիչներ են: Հարցումներին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները: Նրանց անկախ գնահատումները նպաստում են Համալսարանի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանն ու իրականացմանը:

Սույն հետազոտությունում ներկայացվում են 2011-2013 թթ. ԵՊՀ շրջանավարտների՝ Համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ գնահատումների վերլուծությունը:

Աշխատանքը նախատեսված է կրթության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, ինչպես նաև սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանությամբ և տվյալների վերլուծությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-1997-1

© ԵՊՀ հրատ., 2015
© Ա. Գրիգորյան, 2015
© Մ. Զասլավսկայա, 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ........ 5
§ 1. Հետազոտություններին մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը ........ 9
§ 2. Հետազոտություններին մասնակցած շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից ........ 30
2.1. Շրջանավարտների կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման մեթոդաբանության և ուսումնական գործընթացի կազմակերպման գնահատականների ընդհանուր նկարագիրը ........ 35
2.2. Շրջանավարտների բավարարվածությունը տեսական գիտելիքներից ........ 42
2.3. Շրջանավարտների բավարարվածությունը ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից ........ 44
2.4. Շրջանավարտների բավարարվածությունը հաճախած դասընթացների օգտակարությունից ........ 47
2.5. Շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից ........ 50
2.6. Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների օգտակարությունից ........ 52
2.7. Շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողություններից ........ 55
2.8. Շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից ........ 57
2.9. Շրջանավարտների բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից ........ 60
§ 3. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից ........ 64
3.1. Շրջանավարտների բավարարվածությունը լսարանային պայմաններից ........ 71
3.2. Շրջանավարտների բավարարվածությունը համակարգչային սրահներից ........ 73
3.3. Շրջանավարտների բավարարվածությունը համացանցի մատչելիությունից ........ 76
3.4. Շրջանավարտների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից ........ 79
3.5. Շրջանավարտների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից ........ 82
3.6. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ գրադարանից ........ 84
**3**.6.1. Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց ........ 84

3.6.2. Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի կահավորանքից ........................................................................................ 87
3.6.3. Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանում սպասարկումից ........................................................................................ 89
§ 4. Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ միջավայրից .................. 91
4.1. Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից ........ 95
4.2. Շրջանավարտների գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից................................................................................ 97
4.3. Շրջանավարտների գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից .......................................................... 100
4.4. Շրջանավարտների գոհունակությունը ուսանողական կառույցներից ........................................................................................ 102
4.5. Շրջանավարտների գոհունակությունն ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից ........................................... 104
4.6. Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները ............................................ 106
§ 5. Շրջանավարտների՝ ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը .................................................................................. 111
Ամփոփում.............................................................................................. 115
Եզրակացություն ........................................................................................ 145
Գրականության ցանկ ................................................................................. 147
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգ ........................ 148
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման հարցաթերթ 2011 թ. ............... 149
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման հարցաթերթ 2012 թ. ............... 151
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման հարցաթերթ 2013 թ. ............... 153
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման հարցաթերթ 2014 թ. ............... 155
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման հարցաթերթ 2015 թ. ............... 157

# Ներածություն

Ժամանակակից Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի արդիականացման գործընթացները նոր մարտահրավերներ են առաջ քաշում համակարգի գործառնության շարունակական կատարելագործման ոլորտում: Փոխակերպվող կրթության համակարգի առկա պայմաններում բուհի ուսումնական գործընթացների կառավարման և կարգավորման համատեքստում առաջանում է ուսանողների մասնագիտական պատրաստման մոնիթորինգի անհրաժեշտություն: Կրթության որակի հետազոտման կարևորագույն տարրերից մեկը ուսանողների մասնագիտացման ռազմավարությունների ուսումնասիրությունն է: Սույն իրավիճակում բարձրագույն կրթության որակի արագ և կանոնավոր սոցիոլոգիական չափումը դառնում է յուրաքանչյուր բուհի արդիականացման անբաժանելի մասը: Մասնավորապես, կրթության սոցիոլոգիայի հիմնադիրներից մեկը` Գեորգ Զիմմելը, ով կրթության ըմբռնմանը մոտենում էր սոցիալական փոխազդեցության հարացույցի տեսանկյունից, հետևյալ կերպ է մեկնաբանում այդ գործընթացը. «Կրթության առաջընթացը կարելի է չափել ոչ թե ուսանողի վրա ուսուցչի ազդեցության ուժով, այլ հակադարձ գործողության ուժով, որն իրագործվում է պասիվ կողմից (այսինքն` ուսանողի) դեպի ակտիվ կողմը (այսինքն` ուսուցիչը)»[1]:

Այս համատեքստում ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները հանդիսանում են ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից: Շրջանավարտների հարցումներն իրականացվում են համալսարանի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով, որոնց անցկացման հիմնական նպատակներից մեկը համալսարանի ուսանողության և ղեկավարության միջև կայուն կապի ապահովումն է:

Շրջանավարտների կողմից իրականացվող անկախ գնահատումները թույլ են տալիս շարունակաբար բարձրացնել ուսումնական գործընթացի որակը, վերհանել պրոֆեսորադասախոսական կազմի գոր-

---

[1] Зиммель Г., *Избранное*. М., 1996, с. 27.

ծառնության դրական և բացասական միտումները, առանձնացնել ուսումնառության ուժեղ և թույլ կողմերը տարբեր տեսանկյուններից և ժամանակին արձագանքել մի շարք ուսումնական հիմնախնդիրների, որոնք առաջանում են կրթական գործընթացների շրջանակներում:

Շրջանավարտների նշված հարցումներն իրականացվում են սկսած 2009 թվականից: Սկզբնական երկու տարիների ընթացքում իրականացվել են պիլոտային հետազոտություններ՝ հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը մշակելու նպատակով: Այնուհետ՝ սկսած 2011 թ., կանոնավոր իրականացվում են ԵՊՀ շրջանավարտների գնահատականների հետազոտությունները:

Որպես հետազոտության օբյեկտ՝ հանդես են գալիս բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները, ովքեր մասնակցում են հարցմանը ավարտական ուսումնական տարվա վերջում՝ ամփոփիչ ատեստավորումից հետո՝ հունիս-հուլիս ամիսներին: Սույն մոտեցումը թույլ է տալիս ստանալ առավել օբյեկտիվ գնահատականներ՝ կապված նաև այն հանգամանքի հետ, որ հարցմանը մասնակցում են այն շրջանավարտները, ովքեր ուսումնասիրել են կոնկրետ ծրագրով նախատեսված գիտելիքների ամբողջական փաթեթը (համապատասխանաբար՝ բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճանի):

Հետազոտությունն անցկացվում է հարցաթերթիկային կիսաձևայնացված հարցման միջոցով: Հարցաթերթերը լրացվում են շրջանավարտների կողմից՝ անանունության սկզբունքով: Հարցաթերթերը և հարցման կանոնակարգը կից ներկայացված են համապատասխանաբար Հավելվածներ 1- 6-ում:

Հետազոտությունների ընթացքում ճշգրտվել են հետազոտության մեթոդաբանությունը, գործիքները և իրականացման ընթացակարգը:

Շրջանավարտների կողմից գնահատվում են կրթական գործընթացի մի շարք հիմնական բաղադրիչներ՝ ա) կրթական, բ) օժանդակ, գ) վարչական: Կրթական բաղադրիչը ներառում է կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը, ուսումնական գործընթացի կազմակերպումը: Այս համատեքստում ԵՊՀ շրջանավարտները գնահատում են իրենց բավարարվածությունը ստացած տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից, մասնա-

գիտական կարողություններից, օտար լեզուների իմացությունից, հաճախած դասընթացների և պրակտիկաների օգտակարությունից, գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից: Օժանդակ բաղադրիչը ներառում է ԵՊՀ ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները: Այս համատեքստում շրջանավարտները գնահատում են իրենց բավարարվածությունը լսարանային պայմաններից, լաբորատորիաների կահավորանքից, համակարգչային սրահներից, համացանցի մատչելիությունից, Կարիերայի կենտրոնի գործունեությունից: Շրջանավարտները գնահատում են նաև իրենց բավարարվածությունը ԵՊՀ գրադարանի աշխատանքի մի շարք բնութագրերից, այն է՝ գրադարանի գրականության ժամանակակից լինելուց, գրադարանի կահավորանքից, գրադարանում սպասարկումից:

Վարչական բաղադրիչը ներառում է ԵՊՀ ղեկավարության գործունեությունը, ֆակուլտետի ղեկավարության գործունեությունը, պրոֆեսորադասախոսական կազմի գործառնությունը, ուսանողական կառույցների գործունեությունը, ինչպես նաև ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգը: Մյուս կողմից՝ շրջանավարտների կողմից գնահատվել է կոռուպցիայի հնարավոր դրսևորումների առկայությունը: Այս պարագայում անհրաժեշտ է նշել, որ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են շրջանավարտների ընկալումները կոռուպցիոն դրսևորումների առկայության վերաբերյալ:

Շրջանավարտները նաև տվել են իրենց ստացած կրթության ընդհանուր գնահատականները: Բացի այդ, հաշվի են առնվել շրջանավարտների առաջարկները կրթական գործընթացի բարելավման վերաբերյալ «բաց հարցի» մեթոդական տեխնիկայի միջոցով (այսինքն՝ հարցվողներին հնարավորություն է տրվել ազատ շարադրանքով ներկայացնել իրենց կարծիքը):

Հետազոտության կարևոր բաղադրիչներից մեկը եղել է աշխատաշուկայում շրջանավարտների ներգրավվածության, աշխատաշուկայի վերաբերյալ նրանց տեղեկացվածության, նրանց աշխատանքի մասնագիտացվածության մակարդակի վերլուծությունը:

Շրջանավարտների հարցման արդյունքները մշակվել են IBM

SPSS Statistics ծրագրային փաթեթի միջոցով: Իրականացվել են տվյալների միաչափ, ինչպես նաև կորելիացիոն և կլաստերային վերլուծությունները:

Անցկացված հետազոտության արդյունքում հնարավոր եղավ վերհանել կրթական գործընթացի այն ոլորտները, որոնք առավել գոհունակության են արժանացել, ինչպես նաև մի շարք կրթական հիմնախնդիրներ այդ ոլորտներում, բնութագրել տարբեր կրթական աստիճանների, ուսուցման ձևերի շրջանակներում կրթական գործընթացի առանձնահատկությունները: Հետազոտությունը թույլ է տվել վերհանել տարբեր ֆակուլտետներում ուսումնական գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, այդ ֆակուլտետներում կրթական գործընթացների՝ շրջանավարտների կողմից ընկալումների առանձնահատկությունները:

Այս աշխատանքում ներկայացված է 2010/2011, 2011/2012, 2012/2013 ուսումնական տարիների ԵՊՀ շրջանավարտների հարցումների արդյունքների համեմատական վերլուծությունը, որը ներառել է նաև շրջանավարտների գնահատականների դինամիկայի առանձնահատկությունները:

## § 1. Հետազոտություններին մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը

Առաջին հետազոտության ընթացքում (2011 թ.) հարցմանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր թիվը կազմել է 2098, ինչը կազմում է 2010/2011 ուստարվա ԵՊՀ բոլոր շրջանավարտների 53,3 %-ը[2]: Մինչդեռ 2012 թ. հարցվածների թիվը կազմում է շրջանավարտների ընդհանուր թվի 82,3 %-ը (ընդհանուր 4467 շրջանավարտներից հարցմանը մասնակցել են 3677-ը): Իսկ 2013 թ. հետազոտության ընթացքում հարցվել են մոտ 71.8 % շրջանավարտներ (ընդհանուր 5071 շրջանավարտներից հարցմանը մասնակցել են 3637-ը):

Համաձայն 2011 թ. տվյալների՝ հարցվածների բաշխումն ըստ ֆակուլտետների ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ֆակուլտետի համար շրջանավարտների թվի տոկոսային շեղումները չեն գերազանցել 5 %-ի շեմը, բացառությամբ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի, որտեղ շեղումը կազմել է 7,1 %: 2012 թ. տոկոսային շեղումները չեն գերազանցել 2,4 %-ի շեմը (տե՛ս աղյուսակ 1): Սակայն 2013 թ. ընտրանքի շեղման առավելագույն չափը կազմել է 5,5 % Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի համար:

[2] Ընտրանքի սահմանային սխալը պատահական ընտրանք իրականացնելու դեպքում՝ 0.05 նշանակալիության մակարդակի համար չպետք է գերազանցի 0.02 %-ը:

Աղյուսակ 1

## Շրջանավարտների բաշխումն ըստ ֆակուլտետների և կենտրոնների

| Ֆակուլտետներ և կենտրոններ | 2011 թ. | | 2012 թ. | | 2013 թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում |
| Մաթեմատիկայի և մեխանիկայի | 4,5% | 3,1% | 5.5% | 4.7% | 5.3 | 4.4% |
| Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի | 4,3% | 7,2% | 5.5% | 4.7% | 4.3 | 3.7% |
| Ֆիզիկայի | 3,3% | 5,3% | 3.2% | 3.4% | 3.5 | 2.7% |
| Ռադիոֆիզիկայի | 2,6% | 2,5% | 2.8% | 2.3% | 3.4 | 2.4% |
| Դեղագիտության և քիմիայի | 3,9% | 3,6% | 4.2% | 4.6% | 2.7 | 3.0% |
| Կենսաբանության | 4,2% | 5,4% | 4.9% | 4.0% | 4.4 | 3.3% |
| Աշխարհագրության և երկրաբանության | 3,9% | 5,0% | 6.2% | 5.4% | 6.8 | 5.3% |
| Պատմության | 6,1% | 6,5% | 6.9% | 6.6% | 8.9 | 6.7% |
| Միջազգային հարաբերությունների | 11,2% | 10,4% | 12.0% | 10.7% | 16.6 | 12.6% |
| Տնտեսագիտության և կառավարման | 10,0% | 2,9% | 9.8% | 11.5% | 9.0 | 9.9% |
| Փիլիսոփայության և հոգեբանության | 5,0% | 3,5% | 3.1% | 3.8% | 2.8 | 4.4% |
| Սոցիոլոգիայի | 3,3% | 4,9% | 3.4% | 3.3% | 1.5 | 3.1% |
| Հայ բանասիրության | 5,6% | 6,0% | 5.6% | 5.5% | 7.8 | 6.8% |
| Ժուռնալիստիկայի | 2,2% | 0,5% | 0.9% | 2.4% | 1.5 | 2.7% |
| Ռուս բանասիրության | 2,6% | 3,0% | 2.7% | 3.0% | 2.8 | 2.9% |
| Ռոմանագերմանական բանասիրության | 11,9% | 16,5% | 9.5% | 11.8% | 7.4 | 12.9% |
| Արևելագիտության | 5,4% | 4,6% | 4.7% | 3.8% | 3.4 | 3.9% |
| Իրավագիտության | 7,5% | 5,5% | 5.9% | 5.9% | 6.4 | 6.7% |
| Աստվածաբանության | 1,4% | 1,7% | 1.5% | 1.5% | 0.4 | 1.1% |
| ՏՏԿՀ կենտրոն | 0,7% | 1,2% | 0.6% | 0.6% | 0.7 | 0.4% |
| ԵՌԻ կենտրոն | 0,3% | 0,5% | 0.5% | 0.5% | 0.6 | 0.8% |
| Պատասխանների բացակայություն | | | 0.7% | | | |
| Ընդամենը | 100% | 100% | 100% | 100.0% | 100.0 | 100.0% |

Հարցմանը մասնակցած շրջանավարտների բաշխումն ըստ կրթական աստիճանի արտացոլում է ԵՊՀ շրջանավարտների ընդհանուր պատկերը (տե՛ս աղյուսակ 2): Պետք է նշել, սակայն, որ 2013 թ. հետազոտությանը չեն մասնակցել ***Աստվածաբանության*** ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտները (ընդամենը 7 հոգի):

**Աղյուսակ 2**

**Շրջանավարտների բաշխումն ըստ կրթական աստիճանի**

| Կրթական աստիճան | 2011 թ. | | 2012 թ. | | 2013 թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում |
| Բակալավրիատ | 65,7 | 69,3 | 66.5 | 70.6 | 63.7 | 67.6% |
| Մագիստրատուրա | 30,0 | 30,7 | 28.1 | 29.4 | 29.7 | 32.4% |
| Ընդամենը | 95,8 | | 94.6 | | 93.4 | |
| Պատասխանների բացակայություն | 4,2 | | 5.4 | | 6.6 | |
| Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 | 100.0 | |

2012 թ. և 2013 թ. իրականացված հարցումներին մասնակցած շրջանավարտների բաշխումն ըստ առկա և հեռակա համակարգերի ևս համապատասխանում է ԵՊՀ շրջանավարտների ընդհանուր բնութագրին: Նշենք, որ հեռակա ուսուցումը ԵՊՀ-ում վերականգնվեց 2007 թ. բակալավրի պատրաստման կրթական ծրագրով (5 տարվա ուսուցմամբ) և 2009 թ. մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրով (2,5 տարվա ուսուցմամբ): Նշենք նաև, որ 2012 թ. ԵՊՀ առկա համակարգի շրջանավարտները կազմում էին բոլոր շրջանավարտների 86,5 %-ը, իսկ 2013 թ. նրանք կազմել են 82,2 %: Շրջանավարտների բաշխումը ըստ առկա և հեռակա համակարգերի ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

**Շրջանավարտների բաշխումը ըստ ուսուցման ձևի**

| Ուսուցման ձև | 2012 թ. | | 2013 թ. | |
|---|---|---|---|---|
| | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում | Տոկոսը ընտրանքում | Տոկոսը գլխավոր համախմբությունում |
| Առկա | 87.0 | 86.5 | 83.2 | 82.2% |
| Հեռակա | 13.0 | 13.5 | 16.8 | 17.8% |
| Ընդամենը | 100 | 100 | 100.0 | 100.0 |

Անդրադառնալով շրջանավարտների **կրթությունը շարունակելու ձգտմանը**՝ պետք է նշել, որ ընդհանուր առմամբ շրջանավարտներին բնորոշ է ապագայում կրթություն ստանալու ցանկությունը: Սակայն նրանց թիվը երեք տարվա ընթացքում շարունակական անկում է ապրել. եթե 2011 թ. շրջանավարտների մոտ 72 %-ը պատրաստվում էր շարունակել ուսումը, ապա ըստ 2012 թ. արդյունքների՝ նրանց թիվը կազմում էր մոտ 70 %, իսկ 2013 թ.՝ մոտ 63 %:

Պետք է նշել, որ այդ տոկոսը գոյանում է հիմնականում բակալավրիատի շրջանավարտների պատասխաններից. բակալավրիատն ավարտածների գերակշռող մեծամասնությունը (ըստ համապատասխան տարիների՝ 83,2 %, 79,6% և 74,6 %) ձգտում է շարունակել ուսումը: Մագիստրատուրան ավարտածների համար այդ թիվը 2011 թ., 2012 թ. և 2013 թ. համապատասխանաբար կազմում էր 45,4 %, 46.1 % և 36 %. (տե՛ս գծապատկեր 1): Եթե հաշվի առնենք, որ մագիստրոսների ընդամենը 6-7 %-ն է շարունակում ուսումը ասպիրանտուրայում, ապա սույն տվյալները վկայում են այն մասին, որ մագիստրոսների մոտ 30-40 %-ը ցանկություն ունի կրթություն ստանալու նաև այլ մասնագիտությամբ կամ ընկալում է հարցը հարատև կրթության հայեցակարգի տեսանկյունից:

**Գծապատկեր 1.**

**Շրջանավարտների՝ ուսումը շարունակելու ցանկությունը ըստ կրթական աստիճանի**




Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում, շրջանավարտների՝ բակալավրիատում ուսումը շարունակելու ցանկությունները 2013 թ. նվազել են մոտ 5 %-ով: Ի հավելումն վերը նշվածի՝ նշանակալի է այն շրջանավարտների թիվը, ովքեր կողմնորոշված չեն այդ հարցում: 2011 թ. այն կազմում էր ընդամենը 5,4 %, 2012 թ.՝ 10,7 %, իսկ 2013 թ.՝ մոտ 8 % :

Պետք է նշել, որ եթե ուսումը շարունակելու ցանկության նվազումը 2012-ին, ի տարբերություն 2011-ի, դրսևորվում է հիմնականում բակալավրիատում, ապա 2013 թ. այն նվազել է և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում:

Բակալավրիատի և մագիստրատուրայի տարբեր ֆակուլտետներում սովորող շրջանավարտների ուսումը շարունակելու ցանկությունները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկերներ 2ա և 2բ):

**Գծապատկեր 2ա.**

***Հետազոտված ժամանակահատվածում բակալավր շրջանավարտներից ուսումը շարունակել ցանկացողների տոկոսի փոփոխությունները՝ ըստ ֆակուլտետների***




Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2ա-ում, ուսումը շարունակել ցանկացողների թիվը ընդհանուր առմամբ նվազել է գրեթե բոլոր ֆակուլտետներում, բացառությամբ ***Դեղագիտության և քիմիայի, Աստվածաբանության, Աշխարհագրության և երկրաբանության*** ֆակուլտետների: Այդ թիվը կտրուկ նվազել է առավելապես ***Իրավագիտության*** և ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետներում:

Նման միտումներ կարող ենք արձանագրել նաև մագիստրատուրայի շրջանավարտների շրջանում: Սակայն հարկ է նշել, որ բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների՝ ուսումը շարունակելու ցանկության մեկնաբանությունները տարբերվում են միմյանցից:

**Գծապատկեր 2բ.**

**Հետազոտված ժամանակահատվածում մագիստրոս շրջանավարտների՝ ուսումը շարունակել ցանկացողների տոկոսի փոփոխությունները՝ ըստ ֆակուլտետների և կենտրոնների**




Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2բ-ում, ուսումը շարունակել ցանկացողների թիվը կտրուկ աճել է ***Դեղագիտության և քիմիայի***,

***Պարմության*** ինչպես նաև ***Տնտեսագիտության և կառավարման,*** և ***Հայ բանասիրության*** ֆակուլտետներում, իսկ մնացած ֆակուլտետներում այդ թիվը հիմնականում նվազել է: Այդ թիվն առավել նվազել է ***Արևելագիտության, Աշխարհագրության և երկրաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության, Իրավագիտության*** ֆակուլտետներում:

Ինչ վերաբերում է աշխատող շրջանավարտներին, ապա 2011-2013 թթ. նրանց թվի ոչ շատ արագ, սակայն կայուն աճ է գրանցվել: Եթե 2011 թ. այն կազմում էր 26,1 %, 2012 թ.` 28.6 %, ապա 2013 թ. կազմել է 34.3 %: Սակայն աշխատող շրջանավարտների շրջանում ավելի է աճել ոչ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տոկոսը (տե՛ս գծապատկեր 3):

**Գծապատկեր 3.**
**Շրջանավարտների բաշխումներն ըստ աշխատանքով ապահովվածության**




Չաշխատող շրջանավարտների թվի նվազումը պայմանավորված է բակալավր շրջանավարտների` աշխատաշուկայում ներգրավվածության աճով, ինչը պարզ երևում է գծապատկեր 4-ից: Ընդ որում,

աճել է ինչպես մասնագիտությամբ, այնպես էլ ոչ մասնագիտությամբ աշխատող բակալավր շրջանավարտների տոկոսը: Ինչ վերաբերում է մագիստրատուրայի շրջանավարտներին, ապա, ինչպես և տրամաբանական է ակնկալել, ի տարբերություն բակալավրիատն ավարտածների՝ նրանք ավելի շատ են ընդգրկված աշխատաշուկայում: Այդ միտումը պահպանվել է վերջին 3 տարիների ընթացքում (տե՛ս գծապատկեր 4): Նրանց մոտ կեսը ներգրավված է աշխատաշուկայում, սակայն 2012 թ. նկատվում է ոչ մասնագիտությամբ աշխատող մագիստրոսների թվի աճ, որը չի փոխվել և պահպանվել է 2013 թ.: Այդ միտումը հետևանք է այն հանգամանքի, որ 2012 թ. ի վեր ԵՊՀ շրջանավարտների շարքերում ընդգրկվել են նաև հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտները:

**Գծապատկեր 4.**
**Շրջանավարտների՝ աշխատանքով ապահովվածությունն ըստ կրթական աստիճանի**




Պետք է նշել, որ ֆակուլտետները, ըստ շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածության, նշանակալիորեն տարբերվում են իրարից: Ընդ որում, ***Ժուռնալիստիկայի ֆակուլտետը*** վերջին 2 տարվա ընթացքում գրավում է առաջին տեղը բակալավրիատի շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածության տեսանկյունից, սակայն ըստ մագիստրատուրայի շրջանավարտների՝ աշ-

խատաշուկայում ներգրավվածության` 2013 թ. զբաղեցնում է վերջին տեղերից մեկը (տե՛ս գծապատկերներ 5ա և 5բ): Արձանագրվում է այդ ֆակուլտետի շրջանավարտների` աշխատաշուկայում ներգրավվածության *կտրուկ նվազում* 2 տարիների ընթացքում: Ինչպես երևում է գծապատկեր 5ա-ից, այդ միտման արդյունքում ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտների` աշխատաշուկայում ներգրավվածությանը հասել են ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ու ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

Գծապատկեր 5ա-ից երևում է, որ ***Մաթեմատիկայի և մեխանիկայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Պատմության, Միջազգային հարաբերությունների***, ***Փիլիսոփայության և հոգեբանության, Իրավագիտության*** ֆակուլտետների բակալավրիատի շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության աստիճանը *կտրուկ աճել* է: Ընդ որում, 2012-2013 թթ. աճը ավելի բարձր էր, քան 2011 թ.: Հակառակ պատկերն է ***Ֆիզիկայի, Ժուռնալիստիկայի, Ռադիոֆիզիկայի, Դեղագիտության և քիմիայի, Կենսաբանության*** ֆակուլտետներում: Սույն գծապատկերի տվյալները նաև վկայում են, որ բակալավրիատի շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածությունը ընդհանուր առմամբ աճել է:

**Գծապատկեր 5ա.**

## Բակալավրիատի շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության փոփոխությունները ըստ ֆակուլտետների



**Գծապատկեր 5բ.**

## Մագիստրատուրայի շրջանավարտների՝ աշխատանքով ապահովվածության փոփոխություններն ըստ ֆակուլտետների և կենտրոնների



Ինչ վերաբերում է մագիստրատուրայի շրջանավարտներին, ապա պետք է նշենք, որ ***Ժուռնալիստիկայի, Իրավագիտության*** ֆակուլտետների մագիստրատուրայի շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածությունը 3 տարվա կտրվածքով ընդհանուր առմամբ նվազել է (տե՛ս գծապատկեր 5բ):

Կայուն աճ է արձանագրվում ***Միջազգային հարաբերությունների, Փիլիսոփայության և հոգեբանության, Արևելագիտության, Ռուս բանասիրության*** ֆակուլտետների մագիստրատուրայի շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության գործընթացում: Որոշ ֆակուլտետներում գրանցվել է հետազոտվող 3 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ մագիստրատուրայի շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածության աճ, սակայն ոչ կայուն: Այդ ֆակուլտետների շարքում են ***Ռադիոֆիզիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետները: ***Սոցիոլոգիայի, Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների աշխատաշուկայում ընդգրկվածությունը, չնայած 3 տարիների ընթացքում գրանցված որոշ փոփոխությունների էականորեն չի փոփոխվել:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ, չնայած որոշ փոփոխությունների, բոլոր ֆակուլտետների՝ աշխատաշուկայում ներգրավվածության համեմատական աստիճանակարգը գրեթե չի փոխվել, բացառությամբ մի քանի ֆակուլտետների, այդ թվում՝ ***Ժուռնալիստիկայի*** (տե՛ս գծապատկերներ 5ա և 5բ):

Ի հավելում նշենք նաև, որ հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների կեսից ավելին ընդգրկված է աշխատաշուկայում, սակայն նրանց գերակշռող մասը չի աշխատում մասնագիտությամբ (տե՛ս գծապատկեր 6): Այդ միտումը պահպանվել է 2013 թ.՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ աշխատաշուկայում ներգրավվածության աստիճանը բարձրացել է:

**Գծապատկեր 6.**

**Հետազոտված ժամանակահատվածում աշխատանքով ապահովվածության փոփոխությունները` ըստ ուսուցման ձևի**




Անդրադառնալով շրջանավարտների` աշխատաշուկայում ըստ մասնագիտության ընդգրկվելուն` պետք է նշել, որ առավել «մասնագիտացված» են աշխատում ***Դեղագիտության և քիմիայի, Իրավագիտության, Ժուռնալիստիկայի, Ինֆորմատիկայի*** և ***Տնտեսագիտության և կառավարման*** ֆակուլտետների շրջանավարտները. մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը զգալիորեն գերակշռում է այլ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվին: Այս օրինաչափությունը վերաբերում է նաև ***Ֆիզիկայի, Աշխարհագրության և երկրաբանության, Սոցիոլոգիայի*** ֆակուլտետների աշխատող շրջանավարտներին: Պետք է նշել, որ ըստ մասնագիտության աշխատող շրջանավարտների թիվը բավականին աճել է:

Համեմատելով 2011 թ. հետազոտությունից ստացված տվյալների հետ՝ նկատվում է, որ 2012 և 2013 թթ. ևս առավել քիչ են «մասնագիտացված» ***Աստվածաբանության***, ***Միջազգային հարաբերությունների, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Փիլիսոփայության և հոգեբանության, Ռուս բանասիրության, Ռադիոֆիզիկայի, Արևելագիտության***, ***Պատմության*** ֆակուլտետների աշխատող շրջանավարտները: Ստորև բերված գծապատկեր 7-ում ներկայացված է մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվի և այլ մասնագիտություններով աշխատող շրջանավարտների թվի հարաբերակցությունն ըստ ֆակուլտետների[3]:

[3] Եթե հարաբերությունը 1-ի է հավասար, ապա մասնագիտությամբ աշխատող և ոչ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվաքանակները հավասար են: Ինչքանով հարաբերությունը մեծ է 1-ից, այնքանով մասնագիտությամբ աշխատողները գերակշռում են ոչ մասնագիտությամբ աշխատողներին:

**Գծապատկեր 7.**

**Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվի և այլ մասնագիտություններով աշխատող շրջանավարտների թվի հարաբերությունն ըստ ֆակուլտետների**




Հարկ է նշել, որ հետազոտվող տարիների ընթացքում մասնագիտացվածության աստիճանը ընդհանուր առմամբ մեծ փոփոխություններ չի կրել, բացառությամբ որոշ ֆակուլտետների, որտեղ այն բավականին փոփոխվել է (տե՛ս գծապատկեր 7):

Ոչ արագ, բայց մասնագիտացվածության կայուն աճ է գրանցվել ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետում: ***Դեղագիտության և քիմիայի, Տնտեսագիտության և կառավարման, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետներում իրավիճակը գրեթե փոփոխությունների չի ենթարկվել: Մինչդեռ հակառակ պատկերն է ***Իրավագիտության*** և ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետներում, որտեղ գրանցվել է աշխատաշուկայում ներգրավված՝ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվի կայուն անկում:

Անդրադառնալով ԵՊՀ կենտրոնների շրջանավարտների տվյալ բնութագրին՝ պետք է նշենք, որ ***ՏՏԿՀ կենտրոնի***՝ *ըստ մասնագիտության աշխատող* շրջանավարտների թվի կտրուկ աճ է գրանցվել, ընդ որում՝ բավականին մեծ կայուն արագությամբ: Իսկ ***ԵՌԻ կենտրոնի*** շրջանավարտները չեն առանձնանում ըստ մասնագիտության աշխատանքի առկայության բարձր աստիճանով:

Ինչ վերաբերում է շրջանավարտների *ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածությանը*, ապա ի տարբերություն 2011 թ.՝ 2012 և 2013 թթ. գրանցվել է շրջանավարտների՝ ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի աճ: Եթե 2011 թ. ապագա աշխատանքի մասին *տեղեկություններ ունեցող* շրջանավարտների թիվը կազմում էր մոտ 27 %, ապա 2012 թ. այն կազմել է 32 %, իսկ 2013 թ.՝ մոտ 36 %:

Պետք է նշել, որ արձանագրվել է բնական մի օրինաչափություն՝ նշանակալի կապ տեղեկացվածության և աշխատաշուկայում ընդգրկվածության միջև (տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4**

**2012-2013 թթ. շրջանավարտների՝ աշխատաշուկայում ընդգրկվածության և ապագա աշխատանքի միջև կորելիացիոն կապի ցուցանիշները ըստ կրթական աստիճանի**

| Կրթական աստիճան | Ավարտելու թվական | Կրամերի V գործակցի արժեքը | Նշանակալիության աստիճան |
|---|---|---|---|
| Բակալավրիատ | 2011 թ. | 0.536 | .000 |
| | 2012 թ. | 0.517 | .000 |
| | 2013 թ. | 0.591 | .000 |
| Մագիստրատուրա | 2011 թ. | 0.778 | .000 |
| | 2012 թ. | 0.666 | .000 |
| | 2013 թ. | 0.735 | .000 |
| Ընդհանուր շրջանավարտների համար | 2011 թ. | 0.685 | .000 |
| | 2012 թ. | 0.599 | .000 |
| | 2013 թ. | 0.651 | .000 |

Աղյուսակում զետեղված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ բակալավրիատում կապը աշխատելու և աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության միջև ավելի թույլ է, քան մագիստրատուրայում: Դա բնական է՝ հաշվի առնելով բակալավր շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածության ավելի ցածր աստիճանը: Աղյուսակից երևում է ևս մեկ առանձնահատկություն. 2012 թ. շրջանավարտները ավելի խոցելի վիճակում էին, քան 2011 և 2013 թթ.՝ աշխատելու և տեղեկացված լինելու միջև կապի տեսանկյունից: Այսինքն, ըստ տվյալների, այդ տարի աշխատաշուկայում ներգրավվելու գործընթացը ավելի չկարգավորված բնույթ էր կրում, քան այլ տարիներին:

Որպես օրինաչափություն կարելի է նշել նաև, որ բակալավրիատի շրջանավարտներն ավելի քիչ են տեղեկացված աշխատաշուկայում իրենց հնարավորությունների մասին, սակայն բակալավրիատում տեղեկացվածության աճի արագությունը արագ է՝ ի համեմատ մագիստրատուրայի շրջանավարտների տեղեկացվածության, որն ընդհանուր առմամբ նշանակալի չի փոխվել: Այդ օրինաչափությունը վառ երևում է գծապատկեր 8-ում:

**Գծապատկեր 8.**

**Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացված շրջանավարտների տոկոսը ըստ կրթական աստիճանի**




Ինչ վերաբերում է ֆակուլտետներին, ապա տեղեկացված շրջանավարտների տոկոսային փոփոխությունները 2011 թ., 2012 թ., 2013 թ. տրված են գծապատկեր 9-ում:

**Գծապատկեր 9.**

## Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացված շրջանավարտների տոկոսը ըստ ֆակուլտետների




Ինչպես երևում է գծապատկերից՝ ապագա աշխատանքի վերաբերյալ առավել տեղեկացված են ***Ժուռնալիստիկայի***, ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները: Առավել ցածր են տեղեկացված բանասիրական ուղղվածության (***Հայ բանասիրության***, ***Ռուս բանասիրության***, ***Ռոմանագերմանական բանասիրության***) ֆակուլտետների, ինչպես նաև ***Փիլիսոփայության և հոգեբանության***, ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

Տեղեկացվածության զգալի աճ է գրանցվել ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի***, ***Ռադիոֆիզիկայի***, ***Միջազգային***

***հարաբերություններ***, ***Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտների մոտ: Կայուն աճում է նաև տեղեկացվածությունը ***Կենսաբանության***, ***Փիլիսոփայության և հոգեբանության***, ***Պատմության***, ***Աշխարհագրության և երկրաբանության***, ***Ռոմանագերմանական բանասիրության*** ֆակուլտետների շրջանավարտների մոտ: Հակառակ պատկերն է ***Ժուռնալիստիկայի***, ***Սոցիոլոգիայի***, ***Դեղագիտության և քիմիայի***, ***Իրավագիտության*** ֆակուլտետների շրջանավարտների մոտ. ապագա աշխատանքի վերաբերյալ նրանց տեղեկացվածության մակարդակը նվազել է[4]:

Պետք է նշենք նաև, որ ***ՏՏԿՀ*** և ***ԵՈՒ կենտրոնների*** շրջանավարտներն առանձնանում են աշխատանքի վերաբերյալ առավել բարձր տեղեկացվածությամբ:

[4] Նշենք, որ այստեղ խոսքը գնահատականների **փոփոխությունների**, այլ ոչ թե բացարձակ արժեքների մասին է (օրինակ՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի շրջանավարտների տեղեկացվածության անկման հետ մեկտեղ նրանց ընդհանուր տեղեկացվածության մակարդակը մնում է բավականին բարձր):

## § 2. Հետազոտություններին մասնակցած շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից

### *Շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը*

Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ ԵՊՀ շրջանավարտները բավարարված են ԵՊՀ-ում ստացած կրթությունից: Դրա մասին են վկայում շրջանավարտների կողմից տրված գնահատականները, որոնք ընդհանուր առմամբ միջինում բարձր են «լավ» գնահատականից[5]: Հետազոտվել են կրթության մի շարք բնութագրեր, այդ թվում՝

- կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը և ուսումնական գործընթացի կազմակերպումը,
- ԵՊՀ ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները,
- ԵՊՀ կրթական միջավայրը:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջանավարտներն ընդհանուր առմամբ *ավելի շատ բավարարված են ԵՊՀ միջավայրից*, որտեղ ընդգրկված են ինչպես ԵՊՀ, այնպես էլ ֆակուլտետների ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական կառույցները և այլն: Շրջանավարտները համեմատաբար քիչ են բավարարված ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից: Իսկ բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից զբաղեցնում է ընդհանուր առմամբ միջին դիրք: Այդ միտումները պահպանվել են հետազոտված 3 տարիների ընթացքում: Այսինքն՝ 2011 թ. շրջանավարտների կողմից տրված գնահատականներում հիմնական օրինաչափությունները

[5] Նշենք, որ գնահատման համար կիրառվել է **4** միավորանոց սանդղակը, որտեղ «2»-ը ներկայացրել է «անբավարար» գնահատականը, «3»-ը՝ «բավարար», «4»՝ «լավ» և «5»-ը՝ «գերազանց»:

պահպանվել են ինչպես 2012 թ. գնահատականների, այնպես էլ 2013 թ. համար:

Ծրջանավարտները մասնավորապես միջինում առավել բարձր են գնահատել ***պրոֆեսորադասախոսական կազմին*** (միջին արժեքները համապատասխանաբար ըստ տարիների՝ 4,50, 4,55 և 4,68 միավոր), ***ֆակուլտետի ղեկավարությանը*** (միջին արժեքները համապատասխանաբար՝ 4,48, 4,52 և 4,66 միավոր), ***ուսական գիտելիքները*** (միջին արժեքները համապատասխանաբար՝ 4,41 4,43 և 4,55 միավոր):

Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ 2011-2013 թթ. շրջանավարտների բավարարվածության առումով կայուն աճ է գրանցվել: Նշենք, որ 2011-2012 թթ. գնահատականները միջինում աճել են 0,1 միավորով, 2012-2013 թթ.՝ 0,2 միավորով, այսինքն՝ ընդհանուր առմամբ գնահատականները աճում են արագացված կերպով, և 3 տարվա ընթացքում բացարձակ միջին աճը կազմել է 0,3 միավոր: Միջինում *առավել* աճել է շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից, օժանդակ ծառայություններից (մոտ 0,4 միավոր) և ԵՊՀ կրթական միջավայրից (մոտ 0,3 միավոր): Կրթական ծրագրերից բավարարվածության աստիճանը աճել է մոտ 0,2 միավորով: Աճել է շրջանավարտների բավարարվածությունը[6]

1. ***համացանցի մատչելիությունից*** ՝ **0,54** միավորով (2011-2012 թթ.՝ 0,24 միավորով),
2. ***լսարանային աշխատանքային պայմաններից*** ՝ **0,47** միավորով (2011-2012 թթ. - 0,16 միավորով),
3. ***լաբորատորիաների կահավորանքից*** ՝ **0,46** միավորով (2011-2012 թթ. - 0,23 միավորով),
4. ***Կարիերայի կենտրոնի դերից*** ՝ **0,46** միավորով (2011-2012 թթ. - 0,17 միավորով),
5. ***ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից*** ՝ **0,43** միավորով (2011-2012 թթ. - 0,22 միավորով),
6. ***համակարգչային սրահների մատչելիությունից*** ՝ **0,39** միավորով (2011-2012 թթ. - 0,16 միավորով),
7. ***գրադարանի գրականության ժամանակակից լինելուց*** ՝ **0,35** միավորով (2011-2012 թթ. - 0,15 միավորով),

[6] Ցուցակը ներկայացված է ըստ բավարարվածության աճի աստիճանակարգի:

***8. գործնական հմտություններից*** **0,34** միավորով (2011-2012 թթ. – 0,06 միավորով),

***9. ԵՊՀ ղեկավարությունից*** **0,33** միավորով (2011-2012 թթ. - 0,17 միավորով),

***10. ուսանողական կառույցներից*** **0,32** միավորով (2011-2012 թթ. - 0,18 միավորով):

Ընդ որում, հարկ է նշել, որ աճի առավել *բարձր արագությամբ* առանձնանում է բավարարվածությունը ***լսարանային աշխատանքային պայմաններից, Կարիերայի կենտրոնի դերից*** և ***գործնական հմտություններից:***

Վերլուծելով գնահատականների բնույթը՝ անհրաժեշտ է նշել, որ երեք տարիների ընթացքում էլ **ֆակուլտետը՝ որպես գործոն,** գերակշիռ ազդեցություն ունի բոլոր տրված գնահատականների վրա: Ընդ որում, գնահատականների համար առավել արտահայտված է այսպես կոչված «արձագանքի ազդեցությունը», երբ խմբի ներսում տրվում են միանման գնահատականներ: Այդ առումով արձանագրվել է հետաքրքիր մի օրինաչափություն բոլոր 3 հետազոտություններում. որոշ ֆակուլտետների շրջանավարտները հակված են տալու ընդհանուր առմամբ ավելի բարձր գնահատականներ, իսկ որոշ ֆակուլտետների շրջանավարտները՝ համեմատաբար ավելի ցածր գնահատականներ: Այսինքն՝ ըստ շրջանավարտների գնահատականների՝ ֆակուլտետները կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական խմբերի՝ «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներ, «*ցածր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներ և «*միջին գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներ:

Համեմատելով 2011 թ., 2012 թ. և 2013 թ. հետազոտությունների արդյունքները՝ պետք է նշել, որ որոշ ֆակուլտետներում փոփոխվել է շրջանավարտների բավարարվածության մակարդակը:

Շրջանավարտների բավարարվածության մակարդակի *կայուն աճ* արձանագրած ֆակուլտետներից են՝

- ***Իրավագիտության*** ֆակուլտետը,
- ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետը,
- ***Կենսաբանության*** ֆակուլտետը,
- ***Աստվածաբանության*** ֆակուլտետը,

✧ ***Տնտեսագիտության և կառավարման*** ֆակուլտետը:

Շրջանավարտների բավարարվածության *փոփոխական միտում-ներ* են արձանագրվել

✧ ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետում,

✧ ***Հայ բանասիրության*** ֆակուլտետում,

✧ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետում,

✧ ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետում,

✧ ***Դեղագիտության և քիմիայի*** ֆակուլտետում,

✧ ***Պատմության*** ֆակուլտետում:

Շրջանավարտների բավարարվածության *կտրուկ նվազում* է արձանագրվել ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետում (որը, 2011 թ. լինելով առավել «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներից, 2013 թ. համեմատաբար ցածր բավարարվածություն է դրսևորում):

Ընդ որում, 2013 թ. «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետների դասին են պատկանում.

✧ **Իրավագիտության ֆակուլտետը** (2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները մեծ փոփոխությունների գրեթե չեն ենթարկվել),

✧ **Միջազգային հարաբերությունների** ֆակուլտետը ( 2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները կտրուկ աճել են),

✧ **Աստվածաբանության** ֆակուլտետը (2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները կտրուկ աճել են):

2013 թ. «*ցածր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետների դասին են պատկանում.

- **Մաթեմատիկայի և մեխանիկայի** ֆակուլտետը (գնահատականները կտրուկ նվազել են),
- **Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի** ֆակուլտետը (ի համեմատ 2011 թ. գնահատականները որոշ չափով աճել են, սակայն մնում են համեմատաբար ցածր),
- **Փիլիսոփայության և հոգեբանության** ֆակուլտետը (գնահատականները որոշ չափով աճել են, սակայն դեռևս ցածր են),

- **Սոցիոլոգիայի** ֆակուլտետը (գնահատականները փոփոխական են. 2012 թ. կտրուկ աճել են, սակայն 2013 թ. որոշ չափով նորից նվազել են),
- **Տնտեսագիտության և կառավարման** ֆակուլտետը (գնահատականները կտրուկ աճել են, սակայն դեռևս ցածր են):

Մնացած ֆակուլտետները պատկանում են «*միջին գոհունակություն դրսևորող*» դասին:

Հետաքրքրական է իրավիճակը ***ԵՌԻ կենտրոնի*** և ***ՏՏԿՀ կենտրոնի*** մագիստրոս շրջանավարտների գնահատականների առումով: **ԵՌԻ կենտրոնի** շրջանավարտները, 2011 թ. դասվելով որպես «*բարձր գոհունակություն դրսևորող*» շրջանավարտներ, 2012 թ. կտրուկ նվազեցրել են իրենց գնահատականները և 2013 թ. պատկանել են «*միջին*» գոհունակություն դրսևորող դասին:

Հակառակ իրավիճակում են **ՏՏԿՀ կենտրոնի** շրջանավարտները, ովքեր 2011 թ. «*ցածր գոհունակություն դրսևորող*» շրջանավարտների դասից 2012 թ. անցել են «միջին» դասի և պահպանել իրենց դիրքը 2013 թ.:

Վերլուծելով ֆակուլտետների շրջանավարտների գնահատականները՝ պետք է նշել, որ 1–5 միավորանոց սանդղակը շրջանավարտների կողմից, ըստ երևույթին, ընկալվել է ընդհանրացված՝ որպես մեկ համակարգ (այսինքն՝ «1» գնահատականը ընկալվել է ոչ թե որպես «դժվարանում եմ պատասխանել» տարբերակ, այլ որպես գնահատման նվազագույն նիշ), ըստ այդմ՝ 3 արժեքը հանդես էր գալիս որպես սանդղակի միջին արժեք, այլ ոչ թե «բավարար» գնահատական[7]: Այս պարագայում տրված որոշ գնահատականներ թվային ներկայացմամբ պետք է մեկնաբանվեին որպես ավելի բարձր գնահատականներ:

Նաև անհրաժեշտ է շեշտել, որ «*բարձր*» կամ «*ցածր գոհունակություն»* տերմինները օգտագործվում են համեմատական սկզբունքով. գրեթե բոլոր ֆակուլտետների շրջանավարտների գնահատականները միջինում «լավ» գնահատականի շրջակայքում են:

---

[7] Կարելի է նկատել, որ «ցածր գոհունակություն» դրսևորող ֆակուլտետները հիմնականում պատկանում են ճշգրիտ և հասարակական գիտությունների տիրույթին (բացառությամբ փիլիսոփաների):

## *2.1. Շրջանավարտների կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման մեթոդաբանության և ուսումնական գործընթացի կազմակերպման գնահատականների ընդհանուր նկարագիրը*

Այժմ անդրադառնանք ***կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը*** վերաբերող գնահատականների բուն վերլուծությանը:

Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը այդ ոլորտում որոշ չափով աճել է, սակայն զիջելով մնացած ոլորտների շրջանավարտների բավարարվածության աճին: Նաև կարելի է արձանագրել, որ շրջանավարտների բավարարվածությունը այդ ոլորտում կառուցվածքային փոփոխություններ գրեթե չի կրել:

Վերջին 2 տարվա շրջանավարտներն առավել բավարարված են ուսումնառության ընթացքում տրվող ***պետական գիտելիքներից*** («լավ»-«գերազանց» գնահատականների միջև), այնուհետ բարձր է գնահատվել ***ամփոփիչ ատեստավորման գնահատման օբյեկտիվությունը***: Եթե 2012 թ. հարցվողները միջինում 4-ից բարձր են գնահատել նաև *համախած դասընթացների օգտակարությունը, մասնագիտական կարողությունների ձեռքբերումը* և *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը,* իսկ մնացած գնահատականները 4 միավորից նվազ էին, ապա 2013 թ. բոլոր գնահատականները միջինում 4 միավորից բարձր են կամ հավասար: Այդ գնահատականներն ընդհանուր առմամբ համասեռ են դրսևորվել (տե՛ս աղյուսակ 2.1): Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ *միջին գնահատականները* ինֆորմատիվ են բնութագրում շրջանավարտների ընդհանուր բավարարվածությունը վերը նշված բնութագրիչներով:

**Աղյուսակ 2.1**

**Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների**

| | 2011 թ. | | 2012 թ. | | 2013 թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Միջին գնահատական** | Միջին քառակուսային շեղում | **Միջին գնահատական** | Միջին քառակուսային շեղում | **Միջին գնահատական** | Միջին քառակուսային շեղում |
| Տեսական գիտելիքների տրամադրման վերաբերյալ գնահատական | **4,41** | 0,7 | **4.43** | 0.8 | **4.55** | 0.68 |
| Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատական | **4,38** | 0,8 | **4.42** | 0.8 | **4.54** | 0.73 |
| **Գիտելիքի գնահատման օբյեկտիվության գնահատական** | **4,23** | 0,8 | **4.37** | 0.81 | **4.5** | 0.7 |
| Հաճախած դասընթացների օգտակարության գնահատական | **4,28** | 0,8 | **4.29** | 0.8 | **4.43** | 0.74 |
| **Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատական** | **4,17** | 0,8 | **4.24** | 0.8 | **4.42** | 0.8 |
| Պրակտիկաների օգտակարության գնահատական | **4,21** | 1,0 | **4.23** | 1.0 | **4.37** | 0.9 |
| Գործնական հմտությունների տրամադրման վերաբերյալ գնահատական | **3,76** | 1.0 | **3.82** | 1.0 | **4.11** | 1.0 |
| Օտար լեզուների իմացության գնահատական | **3,73** | 1,0 | **3.81** | 1.0 | **4.0** | 1.0 |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2.1-ում, շրջանավարտների բավարարվածության աստիճանը բարձրացել է: Առավել աճել են *գիտելիքի գնահատման օբյեկտիվության*, ինչպես նաև *մասնագիտական կարո-*

*ղությունների ձեռքբերման* գնահատականները (տե՛ս գծապատկեր 2.1): Այդ միտումը պահպանվել է 2012-2013 թթ.:

**Գծապատկեր 2.1.**

**Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների (5 միավորանոց սանդղակով)**




Հիմնվելով վերը նշված տվյալների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ *պրակտիկաների օգտակարության, գործնական հմտությունների տրամադրման վերաբերյալ* և *օտար լեզուների իմացության* գնահատականներն առավել խնդրահարույց են, քանի որ դրանց վրա մեծ ազդեցություն է ունեցել մասնագիտության բնույթը, ըստ այդմ էլ տարբեր ***ֆակուլտետներում*** տրված գնահատականները նշանակալիորեն տարբերվում են, և համասեռությունը ավելի ցածր է: Այդ օրինաչափությունը արձանագրվել է ինչպես 2011 թ., այնպես էլ 2012 և 2013 թթ.: Հետաքրքրական է, որ ի տարբերություն 2011 թ. գնահատականների՝ 2012-2013 թթ. ***մագիստրատուրայի*** և ***բակալավրիատի*** շրջանավարտների գնահատականների միջև տարբերություններն արտահայտվել են ավելի վառ: Եթե 2011 թ. նշանակալիորեն տարբերվում

էին *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականների* (մագիստրոսներն ավելի բավարարված էին, քան բակալավրները) և *պրակտիկաների օգտակարության* գնահատականները (մագիստրոսները ավելի դժգոհ էին, քան բակալավրները)[8], ապա 2012 թ. ի տարբերություն բակալավրների՝ մագիստրոսները նշանակալիորեն ավելի բարձր են գնահատել *գիտելիքի գնահատման օբյեկտիվությունը, հաճախած դասընթացների օգտակարությունը, տեսական գիտելիքների* և *մասնագիտական կարողությունների յուրացումը*:

Ստորև ներկայացված են միջին գնահատականներն ըստ կրթական աստիճանի՝ 2012-2013 թթ. գնահատականների համար (տե՛ս գծապատկեր 2.2):

[8] Բակալավրիատն ավարտած ուսանողներն ավելի բարձր էին գնահատում պրակտիկաների օգտակարությունը (միջինը՝ 4,25), քան մագիստրատուրան ավարտածները (միջինը՝ 4,1): Տարբերությունը կազմում է 0,15 միավոր, սակայն այն նշանակալի տարբերություն է, ինչը հաստատում է Մաննի-Ուիտնիի անկախ ընտրանքներում միջինների տարբերության ոչ պարամետրիկ թեստի կիրառումը: Հարկ է նշել, որ այդ օրինաչափությունը ըստ երևույթին արտացոլում է այն հանգամանքը, որ մագիստրատուրայում պրակտիկան ֆորմալ բնույթ է կրում: Մագիստրոսներն ավելի բարձր են գնահատում *ամփոփիչ ատեստավորման* օբյեկտիվությունը (միջինը՝ 4,46), քան բակալավրները (միջինը՝ 4,35). տարբերությունը կազմում է 0,11 միավոր, և այն նշանակալի է: Այդ օրինաչափության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ բակալավրները ըստ էության անցնում են 2 ամփոփիչ ատեստավորում՝ ներառյալ ավարտական քննությունը և ավարտական աշխատանքի պաշտպանությունը: Մինչդեռ մագիստրոսների ավարտական ատեստավորումը սահմանափակվում է մագիստրոսական թեզի պաշտպանությամբ:

**Գծապատկեր 2.2.**

**Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգը՝ ըստ բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների**




Տվյալներից նաև կարող ենք եզրակացնել, որ *գործնական հմտություններից և պրակտիկաների օգտակարությունից* շրջանավարտների բավարարվածությունը նշանակալիորեն պայմանավորված չէ կրթական աստիճանով: Հետաքրքրականն այն է, որ 2013 թ. բակալավրների և մագիստրոսների՝ *օտար լեզուների առումով ստացած գիտելիքներից* բավարարվածությունը նշանակալիորեն տարբերվում է, մինչդեռ 2012 թ. այն գրեթե նույնն էր այդ կրթական աստիճանների համար: Օտար լեզուների իմացությունից մագիստրոսները 2013 թ. ավելի շատ են բավարարված:

Այստեղ անհրաժեշտ է նշել մի բնական օրինաչափություն. ըստ

***կրթական աստիճանի*** և ***առաջադիմության***՝ նշանակալիորեն տարբերվում է շրջանավարտների բավարարվածության աստիճանը: Մասնավորապես, *տեսական գիտելիքներից*, *մասնագիտական կարողություններից, համախառն դասընթացների օգտակարությունից* և *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից ավելի շատ բավարարված են* բարձր առաջադիմություն դրսևորող շրջանավարտները, քան ցածր առաջադիմություն դրսևորողները: Գնահատականների նման օրինաչափությունը դրսևորվում է նաև կրթական աստիճանների առումով: Մագիստրոսները բակալավրների համեմատությամբ ավելի բարձր բավարարվածություն են դրսևորում: Սակայն բացառություն է կազմում *պրակտիկաների օգտակարության* գնահատումը (միակ բնութագրիչը, ըստ որի մագիստրոսներն ավելի *դժգոհ են*, քան բակալավրները, սակայն ի տարբերություն 2012 թ.՝ 2013 թ. այդ գնահատականներն արդեն նշանակալիորեն չեն տարբերվում ո՛չ կրթական աստիճանի, ո՛չ էլ առաջադիմության համար): Նաև պետք է նշել, որ *գործնական հմտություններից* և *պրակտիկաներից* բավարարվածության աստիճանը ավելի խնդրահարույց է ավելի բարձր առաջադիմություն դրսևորող շրջանավարտների համար:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ չնայած նրան, որ մագիստրատուրայի շրջանավարտները դրսևորում են ավելի բարձր առաջադիմություն, վերը նշված բնութագրից բավարարվածությունը պայմանավորվում է բակալավրիատ-մագիստրատուրա ինստիտուցիոնալ գործոնով, որի ազդեցությունը նվազել է 2013 թ.: Ի դեպ, *մագիստրատուրայում պրակտիկաների օգտակարության խոցելիությունն* արտահայտվել է նաև 2011 թ. գնահատականներում:

**Աղյուսակ 2.4.**

**Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների և տարբեր գործոնների միջև եղած կապի սերտության գնահատականը (Կրամերի գործակցի միջոցով)**[9]

| | Սեռ | | | Կրթական աստիճան | | | Համակարգ | | Ուսումը շարունակելու ցանկություն | | | Առաջադիմություն | | | Աշխատանքով ապահովվածություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 |
| 2.1. Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատական | 0,11 | - | - | - | 0,08 | 0.07 | - | 0.06 | - | - | 0.06 | 0,12 | 0,07 | 0.14 | 0,07 | - | - |
| 2.2. Տեսական գիտելիքների տրամադրման վերաբերյալ գնահատական | 0,07 | - | - | - | 0,08 | 0.09 | - | 0.05 | 0,08 | 0,06 | - | 0,13 | 0,1 | 0.16 | 0,06 | 0,07 | - |
| 2.3. Գործնական հմտությունների տրամադրման վերաբերյալ գնահատական | 0,14 | - | - | - | - | - | 0,07 | 0.1 | - | - | 0.08 | - | - | 0.05 | 0,09 | 0,06 | - |
| 2.4. Օտար լեզուների իմացության գնահատական | 0,07 | - | - | - | - | 0.1 | 0,07 | 0.1 | - | - | 0.13 | - | - | - | 0,09 | - | - |
| 2.5. Համախառն դասընթացների օգտակարության գնահատական | 0,13 | - | - | - | 0,09 | 0.09 | - | 0.06 | 0,08 | - | - | 0,1 | 0,05 | 0.05 | 0,08 | - | - |
| 2.6. Պրակտիկաների օգտակարության գնահատական | 0,11 | - | - | 0,08 | 0,06 | - | 0,07 | 0.09 | - | 0,06 | 0.07 | - | - | - | 0,06 | 0,05 | - |
| 2.7. Գիտելիքի գնահատման օբյեկտիվության գնահատական | 0,07 | - | 0.06 | - | 0,13 | 0.12 | - | 0.05 | - | - | - | 0,11 | 0,13 | 0.1 | - | 0,06 | 0.05 |
| 2.8. Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատական | - | - | - | 0,1 | 0,11 | 0.12 | 0,06 | - | 0,09 | - | - | 0,1 | 0,09 | 0.09 | - | - | 0.05 |

[9] Նշենք, որ տվյալ աղյուսակում տեղ չեն գտել ֆակուլտետի և համապատասխան գնահատականների միջև կորելյացիաները, քանի որ բոլոր կորելյացիաները նշանակալի են յուրաքանչյուր հետազոտված տարվա տվյալների համար:

Ավելի մանրամասն վիճակագրական տվյալներ տե՛ս աղյուսակ 2.4-ում, որտեղ տրված են Կրամերի գործակցի նշանակալի արժեքները (0,95 վստահության հավանականության համար), որոնց միջոցով գնահատվել է տարբեր գործոնների՝ շրջանավարտների կողմից տրված գնահատականների վրա ազդեցության չափը:

## *2.2. Շրջանավարտների բավարարվածությունը տեսական գիտելիքներից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ 2012 թ. գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.2.1): Ըստ կրթական աստիճանի՝ տարբերությունները **նշանակալի են:**

**Գծապատկեր 2.2.1.**

**Տեսական գիտելիքների տրամադրման վերաբերյալ գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Ինչպես երևում է գծապատկերից, տեսական գիտելիքներից բավարարվածությունը կտրուկ աճել է *մագիստրատուրայի* շրջանավարտների մոտ:

Ըստ ֆակուլտետների՝ տեսական գիտելիքների միջին գնահատականների փոփոխությունները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.2.2):

**Գծապատկեր 2.2.2.**

**Տեսական գիտելիքների տրամադրման վերաբերյալ գնահատականների փոփոխություններն ըստ ֆակուլտետների**




Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ ֆակուլտետների աստիճանակարգը՝ ըստ տեսական գիտելիքների գնահատման, կտրուկ փոփոխություններ չի կրել: Սակայն ***Մաթեմատիկայի և մեխանիկայի***, ***Ռադիոֆիզիկայի***, ***Արևելագիտության*** և ***Ռոմանագերմանական բանասիրության*** ֆակուլտետներում տեսական գիտելիքներից բավարարվածության ընդհանուր առմամբ անկում է արձանագրվում: Հակառակ պատկերն է ***Միջազգային հարաբերությունների***, ***Աստվածաբանության***, ***Պատմության***, ***Փիլիսոփայության և հոգեբանության***, ***Աշխարհագրության և երկրաբանության***, ***Կենսաբանության***, ***Դեղագիտության և քիմիայի*** ֆակուլտետներում**:** **Տ**եսական գիտե-

լիքներն առավել ցածր են գնահատում ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները:

Նշենք, որ ***ԵՌՒ և ՏՏԿՀ կենտրոնների*** շրջանավարտները (ընդ որում, նրանք մագիստրոսներ են) դրսևորում են գնահատականների բարձրացում:

Տեսական գիտելիքներից բավարարվածության ավելի բարձր աստիճան են դրսևորում ավելի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները: Աշխատող շրջանավարտները համեմատաբար ավելի ցածր են գնահատում տեսական գիտելիքները: Պետք է նշել նաև, որ տեսական գիտելիքներից բավարարվածությունը նշանակալիորեն չէր տարբերվում առկա և հեռակա համակարգերի շրջանավարտների մոտ, սակայն 2013 թ. հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտները նշանակալիորեն ավելի բարձր են գնահատում գրեթե բոլոր կրթական ծրագրերի բնութագրերը:

### *2.3. Շրջանավարտների բավարարվածությունը ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.3.1.): Ըստ կրթական աստիճանի՝ տարբերությունները **նշանակալի են:** Պետք է նշել, որ բակալավրիատի ուսանողների ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է երկու մասից՝ ավարտական աշխատանքի պաշտպանությունից և պետական քննության հանձնումից: Մագիստրոսների ամփոփիչ ատեստավորումը կայանում է մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով: Ընդ որում, մագիստրոսները նշանակալիորեն ավելի բավարարված են իրենց ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից, քան բակալավրները:

**Գծապատկեր 2.3.1.**

**Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Գծապատկերից երևում է, որ 2012-2013 թթ. մագիստրատուրայի շրջանավարտների՝ ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից բավարարվածության մակարդակը կայուն կերպով աճել է, ինչը չի կարելի պնդել բակալավրիատի շրջանավարտների համար առնվազն 2012 թ.: Սակայն ընդհանուր առմամբ գնահատականները միջինում աճել են ոչ այնքան արագ, ինչպես մագիստրատուրայում:

Ըստ ֆակուլտետների՝ միջին գնահատականների փոփոխություն-ները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.3.2.):

**Գծապատկեր 2.3.2.**

**Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականների փոփոխություններն ըստ ֆակուլտետների**




Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ ֆակուլտետների աստիճանակարգը՝ ըստ ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատման, գրեթե փոփոխություններ չի կրել: Բացառություն են կազմում ***Մաթեմատիկայի և մեխանիկայի***, ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Արևելագիտության*** ֆակուլտետները, որտեղ ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից բավարարվածությունը որոշ չափով նվազել է: Բավարարվածությունը աճել է ***Միջազգային***

***հարաբերությունների, Իրավագիտության, Աստվածաբանության, Կենսաբանության*** ֆակուլտետներում:

Միաժամանակ կարող ենք եզրակացնել, որ *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից* բավարարվածությունը նշանակալիորեն կապված է *առաջադիմության, կրթական աստիճանի* և *աշխատանքով ապահովվածության* հետ: Այն պայմանավորված է նաև ուսուցման ձևի գործոնով:

Նշենք նաև, որ շրջանավարտների 7 %-ից ավելին չկարողացան կողմնորոշվել ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից իրենց բավարարվածությունը գնահատելու գործում, ինչը վկայում է նրա մասին, որ գնահատականը ոչ միանշանակ է ընկալվում հարցվածների մոտ:

## *2.4. Շրջանավարտների բավարարվածությունը հաճախած դասընթացների օգտակարությունից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.4.1.): Ըստ կրթական աստիճանի՝ տարբերությունները **նշանակալի են,** և մագիստրոսները ավելի շատ են բավարարված**:** Ինչպես տեսնում ենք գծապատկերից, դասընթացների օգտակարությունից բավարարվածությունը կտրուկ աճել է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ (ի դեպ, մագիստրոսների մոտ այդ աճը ավելի կտրուկ է արտահայտված):

**Գծապատկեր 2.4.1.**

**Համախած դասընթացների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.4.2.):

Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ ֆակուլտետների աստիճանակարգը՝ ըստ *դասընթացների օգտակարության գնահատման,* գրեթե փոփոխություններ չի կրել: Բավարարվածությունը որոշ չափով նվազել է ***Արևելագիտության, Մաթեմատիկայի և մեխանիկայի***, ***Ռոմանագերմանական բանասիրության*** ֆակուլտետներում: Բավարարվածությունը կայուն աճել է ***Աստվածաբանության, Միջազգային հարաբերությունների, Պատմության*** ֆակուլտետներում:

**Գծապատկեր 2.4.2.**

**Հաճախած դասընթացների օգտակարության գնահատականների փոփոխություններն ըստ ֆակուլտետների**




Նաև կարող ենք եզրակացնել, որ *հաճախած դասընթացների օգտակարությունից* բավարարվածությունը նշանակալի կապված է *առաջադիմության* հետ:

## *2.5. Շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից*

Պետք է նշել, որ ըստ կրթական աստիճանի շրջանավարտների գնահատականների տարբերությունները **նշանակալի են** և բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.5.1.)։ Ինչպես տեսնում ենք, գծապատկերում զետեղված տվյալների համաձայն՝ *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից* բավարարվածությունը կտրուկ աճել է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ (մագիստրոսների մոտ այդ աճը ավելի կտրուկ է արտահայտված)։

**Գծապատկեր 2.5.1.**

**Գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.5.2.)։

**Գծապատկեր 2.5.2.**

**Գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատականների փոփոխություններն ըստ ֆակուլտետների**




Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ ֆակուլտետների աստիճանակարգը՝ ըստ *գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատման,* մեծ փոփոխություններ չի կրել: Բավարարվածությունն աճել է հիմնականում *հումանիտար ուղղվածության* ֆակուլտետներում, մասնավորապես՝ ***Միջազգային հարաբերությունների, Իրավագիտության***, ***Աստվածաբանության,*** նաև ***Սոցիոլոգիայի*** և ***Տնտեսագի-***

***պության և կառավարման*** ֆակուլտետներում: Հակառակ պատկերն է ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետում. այդ ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից որոշ չափով նվազել է: Հարկ է նշել նաև, որ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետի շրջանավարտներն առավել դժգոհ են *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից:*

Կարող ենք եզրակացնել նաև, որ *գիտելիքի գնահատման օբյեկտիվությունից* բավարարվածությունը նշանակալիորեն կապված է *առաջադիմության, կրթական աստիճանի* հետ. մագիստրատուրայի շրջանավարտները և ավելի բարձր առաջադիմություն դրսևորողները բնականաբար ավելի շատ են բավարարված գիտելիքի գնահատման օբյեկտիվությունից: Հետաքրքրական է նաև, որ մասնագիտությամբ աշխատողները ևս ցուցաբերում են ավելի բարձր բավարարվածություն:

### *2.6. Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների օգտակարությունից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.6.1.): Այս դեպքում տարբերությունները **նշանակալի են.** ինչպես նշված էր վերևում, մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *ցածր* են: Սակայն և այս դեպքում արձանագրվել է շրջանավարտների բավարարվածության աճ: Ինչպես երևում է գծապատկերից, բավարարվածությունն աճել է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ:

**Գծապատկեր 2.6.1.**

**Պրակտիկաների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.6.2.)։

**Գծապատկեր 2.6.2.**

**Պրակտիկաների օգտակարության վերաբերյալ գնահատականների փոփոխությունները ըստ ֆակուլտետների**




Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ ֆակուլտետների աստիճանակարգը՝ ըստ *պրակտիկաների օգտակարության գնահատականների,* որոշ չափով փոփոխվել է: Բավարարվածությունը որոշ չափով նվազել է ***Մաթեմատիկայի և մեխանիկայի***, ***Արևելագիտության*** ֆակուլտետներում և որոշ չափով աճել է *հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների* ֆակուլտետներում (***Իրավագիտության, Պատմության, Աստվածաբանության, Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետներում): Սակայն ընդհանուր առմամբ ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետի շրջանավարտները դրսևորում են ավելի

ցածր բավարարվածություն պրակտիկաների օգտակարությունից՝ համեմատած նրանց այլ գնահատականների հետ:

## 2.7. *Շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողություններից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.7.1.): Ըստ կրթական աստիճանի՝ տարբերությունները **նշանակալի են:** Ինչպես տեսնում ենք գծապատկերում, *մասնագիտական կարողություններից* բավարարվածությունը կտրուկ աճել է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ: Ի դեպ, մագիստրոսների մոտ այդ աճը ավելի կտրուկ է արտացոլված, առավել ևս, որ մագիստրոսների գնահատականների կառուցվածքը նույնպես փոփոխվել է հօգուտ «գերազանց» գնահատականի:

**Գծապատկեր 2.7.1.**

**Մասնագիտական կարողությունների ձեռքբերման վերաբերյալ գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.7.2.)։

Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ ֆակուլտետների աստիճանակարգը՝ ըստ *մասնագիտական կարողությունների գնահատականների,* էական փոփոխություն չի կրել։ Բավարարվածությունը որոշ չափով նվազել է ***Ժուռնալիստիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետներում, որոշ չափով կայուն աճել է ***Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Պատմության, Աստվածաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության, Հայ բանասիրության*** ֆակուլտետներում։

**Գծապատկեր 2.7.2.**

**Մասնագիտական կարողությունների ձեռքբերման միջին գնահատականների փոփոխությունները ըստ ֆակուլտետների**



Հարկ է նշել նաև, որ այլ ֆակուլտետների համեմատությամբ՝ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները ավելի քիչ են բավարարված *մասնագիտական կարողությունների ձեռքբերումից:*

Կարող ենք նշել նաև, որ *մասնագիտական կարողությունների ձեռքբերումից* բավարարվածությունը նշանակալիորեն կապված է *առաջադիմության* հետ:

## *2.8. Շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.1.): Որպես առանձնահատկություն՝ պետք է նշել, որ ըստ կրթական աստիճանի և առաջադիմության տարբերությունները **նշանակալի չեն:** Դա նշանակում է, որ *գործնական հմտությունների* գնահատականները բակալավրիատում և մագիստրատուրայում վիճակագրորեն տարբերակելի չեն: Ինչ վերաբերում է գնահատականների փոփոխմանը, ապա ինչպես երևում է գծապատկերից, *գործնական հմտություններից* բավարարվածությունը կտրուկ աճել է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ, ընդ որում՝ մագիստրոսների մոտ այդ աճը ավելի կտրուկ է արտահայտված, մանավանդ որ մագիստրոսների գնահատականների կառուցվածքը ևս փոփոխվել է հօգուտ «գերազանց» գնահատականի: Չնայած դրան՝ 2011-2013 թթ. և՛ բակալավրների, և՛ մագիստրոսների գնահատականների միջև կտրուկ տարբերություններ չեն դրսևորվել:

**Գծապատկեր 2.8.1.**

**Գործնական հմտությունների տրամադրման վերաբերյալ գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.2.)։

**Գծապատկեր 2.8.2.**

**Գործնական հմտությունների տրամադրման վերաբերյալ միջին գնահատականների փոփոխություններն ըստ ֆակուլտետների**




Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ բավարարվածությունը որոշ չափով նվազել է ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետում, մնացած գրեթե բոլոր ֆակուլտետներում կայուն աճ է գրանցվել: Կարելի է առանձնացնել նաև ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտներին՝ որպես համեմատաբար բավարարված *գործնական հմտություններից:*

Նաև կարող ենք եզրակացնել, որ տրվող *գործնական հմտություններից* համեմատաբար ավելի քիչ են բավարարված աշխատանք ունեցող շրջանավարտները և առկա համակարգի շրջանավարտները:

Պետք է նշել նաև, որ անցկացված հետազոտությունների շրջա-

նակներում *գործնական հմտությունները* շրջանավարտների կողմից միջինում մոտ 0,5 միավորով ավելի ցածր են գնահատվում, քան տեսական գիտելիքները: Ընդ որում, այդ միտումը պահպանվում է ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Սակայն բոլոր հետազոտություններում էլ մագիստրատուրայում գործնական հմտություններից բավարարվածությունը նշանակալիորեն չի տարբերվում բակալավրիատում արձանագրվածից: Ի դեպ, տեսական գիտելիքներից բավարարվածությունը նշանակալիորեն ավելի բարձր է մագիստրատուրայում: Միևնույն ժամանակ, և՛ տեսական գիտելիքներից, և՛ գործնական հմտություններից բավարարվածությունը նշանակալիորեն կապված է շրջանավարտների առաջադիմության հետ: Հետաքրքրականն այն է, որ 2013 թ. *գործնական հմտություններից* բավարարվածությունը նշանակալի գործոն դարձավ *ուսումը շարունակելու* ցանկության համար: Եթե 2011-2012 թթ. *տեսական գիտելիքներից* բավարարվածությունը ավելի բարձր էր գնահատվում ուսումը շարունակել ցանկացողների համար, ապա 2013 թ. այն նշանակալիորեն չի տարբերվում այդ շրջանավարտների համար՝ ի տարբերություն գործնական հմտություններից բավարարվածության. ընդ որում՝ ուսումը շարունակել ցանկացողները հակված են ավելի բարձր գնահատելու գործնական հմտությունները:

## *2.9. Շրջանավարտների բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից*

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են ըստ գծապատկեր 2.9.1-ի, սակայն հետաքրքրական է հետևյալ հանգամանքը. 2012 թ., ըստ կրթական աստիճանի, գնահատականների տարբերությունները **նշանակալի չէին,** իսկ 2013 թ. տարբերությունները դարձան նշանակալի: Դա նշանակում է, որ *օտար լեզուների իմացության* գնահատականները բակալավրիատում և մագիստրատուրայում վիճակագրորեն տարբերակելի չէին, սակայն 2013 թ. մագիստրոսների բավարարվածությունը կտրուկ աճել է ՝ ի համեմատ բակալավրների: Ինչ վերաբերում է գնահատականների փոփոխմանը, ապա ինչպես տեսնում ենք գծապատկերից, *օտար լե-*

*զուների իմացության ապահովումից* բավարարվածությունը աճել է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ:

**Գծապատկեր 2.9.1.**

**Օտար լեզուների իմացության ապահովման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.9.2.):

**Գծապատկեր 2.9.2.**

**Օտար լեզուների իմացության ապահովման միջին գնահատականների փոփոխություններն ըստ ֆակուլտետների**




Վերլուծելով գծապատկերում զետեղված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ բավարարվածությունը որոշ չափով նվազել է ***Արևելագիտության, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետներում: Շրջանավարտների բավարարվածությունը կայուն է ***Իրավագիտության***, ***Միջազգային հարաբերությունների, Աստվածաբանության, Պատմության, Աշխարհագրության և երկրաբանության, Սոցիոլոգիայի*** ֆակուլտետներում:

Հետաքրքրական է, որ 2011 թ. *օտար լեզուների իմացությունից* առավել բավարարվածություն դրսևորողների շարքում էին ***Ռոմանագերմանական բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները: Սակայն 2013 թ. վերոնշյալ ֆակուլտետում շրջանավարտների

բավարարվածությունը անկում է ապրել[10]: ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետի շրջանավարտները առավել *քիչ* են բավարարված օտար լեզուների իմացությունից նշված երեք տարիների ընթացքում:

[10] Նշենք, որ նման օրինաչափություն է գրանցվել նաև ***ԵՌԻ կենտրոնի*** մագիստրոս շրջանավարտների շրջանում:

## § 3. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից

Ինչպես վերը նշվել է, շրջանավարտների միջին բավարարվածությունը ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից ընդհանուր առմամբ ավելի ցածր է, քան ուսումնառությանը վերաբերող միջին բավարարվածությունը (համեմատություն կարելի է անել, քանի որ չափման համակարգերը նույնական են):

Շրջանավարտները համեմատաբար բարձր են գնահատում *գրադարանի* աշխատանքի հետ կապված տարբեր բնութագրերը. միջին գնահատականը 4-ից բարձր է (տե՛ս գծապատկեր 3.1.): Պետք է նշել, որ 2011-2012 թթ. գրադարանի տարբեր բնութագրերից բավարարվածությունն ավելի բարձր էր՝ ի համեմատ այլ գնահատականների: Սակայն, ինչպես տեսնում ենք գծապատկեր 3.1-ում, ***լսարանային պայմաններից բավարարվածությունը*** լուրջ *աճ է* կրել 2013 թ. և որոշ չափով գերազանցում է գրադարանից բավարարվածությանը: Այդ երևույթը կարելի է կապել ԵՊՀ-ում լսարանային պայմանների բարելավման հանգամանքի հետ՝ ի արդյունք ԵՊՀ-ում իրականացվող վերանորոգումների:

Ի դեպ, ինչպես արդեն նշվել է, այս ոլորտում գրանցվել է շրջանավարտների բավարարվածության առավել մեծ աճ: Առավել բարձրացել է շրջանավարտների գոհունակությունը ***լսարանային աշխատանքային պայմաններից***, ***համակարգչային սրահների մատչելիությունից, համացանցի մատչելիությունից***, ինչպես նաև ***լաբորատորիաների կահավորանքից*** և ***գրադարանի գրականության ժամանակակից լինելուց*** (տե՛ս գծապատկեր 3.1.):

**Գծապատկեր 3.1.**

**Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների**




Ինչպես տեսնում ենք, գծապատկերում զետեղված տվյալները ցույց են տալիս 3 տարվա ընթացքում ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից բավարարվածության անընդմեջ կայուն աճ, ինչը վկայում է այն մասին, որ ԵՊՀ-ում այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները գնահատվում են ուսանողների կողմից:

Նշենք նաև, որ շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի աշխատանքից ավելի միանշանակ է, այսինքն՝ գնահատականներն ավելի համասեռ են (միանման)՝ ի տարբերություն մնացած բոլոր գնահատականների, ինչի մասին վկայում են աղյուսակ 3.1-ում ներկայացված տվյալները: Դա նշանակում է, որ գրադարանի աշխատանքը չի առաջացնում լուրջ տարակարծություն շրջանավարտների մոտ:

**Աղյուսակ 3.1**

**Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների**

| | 2011 թ. | | 2012 թ. | | 2013 թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Միջին գնահատական** | Միջին քառակուսային շեղում | **Միջին գնահատական** | Միջին քառակուսային շեղում | **Միջին գնահատական** | Միջին քառակուսային շեղում |
| Բավարարվածությունը գրադարանի սպասարկումից | **4,10** | 0,91 | **4.21** | 0.91 | **4.3** | 0.88 |
| Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից | **4,00** | 0,92 | **4.12** | 0.98 | **4.25** | 0.88 |
| **Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից** | **3,90** | 1,0 | **4.09** | 0.92 | **4.37** | 0.83 |
| Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց | **3,87** | 1,0 | **4.06** | 0.95 | **4.22** | 0.89 |
| **Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից** | **3,84** | 1,0 | **4.02** | 0.95 | **4.23** | 0.92 |
| Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից | **3,65** | 1,1 | **4.0** | 1.01 | **4.11** | 0.99 |
| Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից | **3,62** | 1,1 | **3.9** | 1.0 | **4.08** | 1.0 |
| **Բավարարվածությունը համացանցի մատչելիությունից** | **3,57** | 1,12 | **3.8** | 1.1 | **4.12** | 1.0 |

Պետք է նշել, որ հետազոտության տվյալները վկայում են նաև այն մասին, որ այս ոլորտում բավականին մեծ է այն շրջանավարտների թիվը, ովքեր չեն կողմնորոշվել գնահատականների առումով:

Եթե 2011 թ. առավել դժվարություններ են առաջացրել *Կարիերայի կենտրոնի դերի* գնահատումը (19,9 %-ը դժվարացել է պատասխանել), *համացանցի մատչելիությունից* բավարարվածության գնահա-

տումը (դժվարացել է պատասխանել 11,3 %), *լաբորատորիաների կահավորանքից* բավարարվածության գնահատումը (դժվարացել է պատասխանել 10,8 %), ապա 2012 թ. բոլոր բաղադրիչների գնահատականներում չկողմնորոշվածների թիվը բավականին մեծ էր (տե՛ս աղյուսակ 3.2.)։ Չնայած որ չկողմնորոշվածների թիվը որոշ չափով նվազել է 2013 թ., սակայն այն դեռևս մնում է բավականին մեծ։ Հատուկ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ 2013 թ. *լաբորատորիաների կահավորանքից* բավարարվածության վերաբերյալ կարծիք չունեն հարցվածների մոտ 45 %-ը (տե՛ս աղյուսակ 3.2)։

**Աղյուսակ 3.2**

**Պատասխաններ չտված և պատասխանել դժվարացած շրջանավարտների տոկոսն ըստ ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների**

| | **Պատասխաններ չտվողների և դժվարացողների գումարային տոկոս 2011 թ.** | **Պատասխաններ չտվողների և դժվարացողների գումարային տոկոս 2012 թ.** | **Պատասխաններ չտվողների և դժվարացողների գումարային տոկոս 2013 թ.** |
|---|---|---|---|
| Բավարարվածությունը գրադարանի սպասարկումից | 10,9% | 10,2% | 8,4% |
| Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից | 11,2% | 9,4% | 7,3% |
| Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից | 10,8% | 8,2% | 5,7% |
| Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց | 10,7% | 10,9% | 9,2% |
| Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից | 11,3% | 9,9% | 7,1% |
| Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից | 18,5% | 8,2% | 45,2% |
| Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից | 19,9% | 19,4% | 16,4% |
| Բավարարվածությունը համացանցի մատչելիությունից | 11,3% | 15,8% | 11,2% |

Նշենք, որ պատասխաններ չտվածների առավել մեծ տոկոսը գրանցվել է ***Միջազգային հարաբերությունների***, ***Հայ բանասիրության***, ***Պատմության***, ***Տնտեսագիտության և կառավարման*** և ***Ռոմանագերմանական բանասիրության*** ֆակուլտետների շրջանավարտների շրջանում:

Ի դեպ՝ *Կարիերիայի կենտրոնի դերի* և *համացանցի մատչելիության* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածության մակարդակը առավել ցածր էր 2011-2012 թթ., նաև՝ այդ ծառայություններից և ռեսուրսներից բավարարվածության աստիճանը նույնպես ամենացածրն էր՝ համեմատած մնացած միջին գնահատականների հետ: 2013 թ. պահպանվել է նման միտում. ամենացածր գնահատականները և առավել մեծ չկողմնորոշվածների տոկոս առկա էին *Կարիերիայի կենտրոնի դերի* և *լաբորատորիաների կահավորանքի* գնահատականներում: Այդ հանգամանքը պայմանավորված է ֆակուլտետներում ենթակառուցվածքի առանձնահատկություններով: Խնդիրը առաջացել է այն պատճառով, որ չեն առանձնացվել (զտվել) այն շրջանավարտները, ովքեր չեն առնչվել որոշ կոնկրետ ռեսուրսների և ծառայությունների հետ:

Վերլուծելով 2011-2013 թթ. հետազոտությունների տվյալները՝ կարող ենք նշել, որ ***մագիստրատուրայի*** շրջանավարտները ընդհանուր առմամբ ավելի *դժգոհ են գրադարանի գրականության ժամանակակից լինելուց, գրադարանի աշխատանքի պարբեր բնութագրերից,* քան բակալավրիատի շրջանավարտները: 2013 թ. մագիստրոսները նաև ավելի դժգոհ են *լսարանային պայմաններից*, սակայն այդ տարբերությունը նշանակալի չէ:

Հետաքրքիր են բաշխվել գնահատականներն ըստ առաջադիմության: Եվս մեկ անգամ պետք է նշել, որ առաջադիմության գործոնի ազդեցությունը տարբերվում է կրթական աստիճանի գործոնի ազդեցությունից:

Ընդ որում, առավել բավարարված խմբերը ***միջին առաջադիմություն*** դրսևորող խմբերն են: Ավելի քիչ բավարարվածություն են դրսևորում միջինից ***բարձր*** և միջինից ***ցածր առաջադիմությամբ*** խմբերը:

Կապված ուսուցման ձևի հետ՝ պետք է նշել, որ ***առկա համակար-***

***գի*** շրջանավարտները հակված են տալու ընդհանուր առմամբ ավելի *ցածր* գնահատականներ, քան ***հեռակա համակարգի*** շրջանավարտները:

Հարկ է նշել նաև, որ ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների վերաբերյալ առավել *բարձր բավարարվածություն* են արձանագրել ***ոչ մասնագիտությամբ*** աշխատող շրջանավարտները, առավել *դժգոհ* են եղել ***մասնագիտությամբ*** աշխատող շրջանավարտները:

Շրջանավարտների կողմից տրված գնահատականների տարբեր գործոնների ազդեցության չափի վերաբերյալ ավելի մանրամասն վիճակագրական տվյալներ կարելի է տեսնել աղյուսակ 3.3-ում, որտեղ տրված են Կրամերի գործակցի նշանակալի արժեքները:

**Աղյուսակ 3.3**

**Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների և տարբեր գործոնների միջև եղած կապի սերտության գնահատականը (Կրամերի գործակցի արժեքների միջոցով)[11]**

| | Սեռ | | | Կրթական աստիճան | | | Համակարգ | | Ուսումը շարունակելու ցանկություն | | | Առաջադիմություն | | | Աշխատանքով ապահովվածություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 |
| Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից | 0,099 | 0,08 | 0.7 | 0,07 | 0,06 | - | - | 0.9 | - | - | - | 0,075 | 0,05 | - | - | 0,05 | 0.1 |
| Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից | - | 0,08 | - | - | - | - | - | 0.8 | - | - | - | 0,061 | 0,05 | - | - | 0,06 | 0.08 |
| Բավարարվածությունը համացանցի մատչելիությունից | 0,074 | 0,07 | - | 0,07 | 0,06 | - | 0,08 | 0.8 | - | - | 0.06 | - | 0,05 | - | 0,068 | 0,08 | - |
| Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից | - | 0,09 | - | 0,09 | 0,07 | - | 0,06 | 0.7 | - | - | 0.07 | 0,069 | 0,07 | - | 0,086 | 0,08 | - |
| Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից | - | 0,07 | - | 0,07 | 0,06 | 0.1 | 0,08 | 0.13 | - | - | 0.14 | - | 0,05 | - | - | 0,07 | 0.07 |
| Բավարարվածությունը գրադարան հաճախումներից | 0,09 | 0,06 | 0.1 | 0,19 | 0,12 | 0.11 | 0,06 | 0.1 | 0,31 | 0,1 | 0.09 | 0,153 | - | 0.05 | 0,14 | 0,09 | 0.08 |
| Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց | - | 0,06 | - | 0,11 | 0,1 | 0.12 | 0,06 | 0.09 | - | - | - | 0,089 | 0,06 | 0.04 | 0,064 | 0,06 | 0.06 |
| Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից | 0,068 | - | - | - | 0,06 | 0.12 | 0,084 | 0.09 | - | 0,06 | 0.09 | - | - | - | 0,067 | 0,05 | 0.05 |
| Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից | 0,078 | - | - | - | 0,06 | 0.1 | 0,07 | 0.08 | - | | 0.07 | 0,059 | - | - | - | - | 0.07 |

[11] Նշանակալիության մակարդակը վերցվել է 0,05:

## *3.1. Շրջանավարտների բավարարվածությունը լսարանային պայմաններից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.1.1): Նշենք, որ բակալավրների և մագիստրոսների գնահատականների տարբերությունները 2013 թ. ***նշանակալի չեն,*** չնայած որ մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *ցածր* են, քան բակալավրիատի շրջանավարտներինը: Մինչդեռ 2011-2012 թթ. մագիստրատուրայում լսարանային պայմանները զգալիորեն ավելի բարձր էին գնահատվել: Ինչպես տեսնում ենք, 2012-2013 թթ. այս ոլորտում գրանցվել է գնահատականների աճի ամենաբարձր արագություններից մեկը, և շրջանավարտների բավարարվածությունը այս ոլորտում ***կտրուկ աճել*** է, սակայն հետաքրքրական է, որ մագիստրատուրայում բավարարվածության աճի արագությունը ավելի ցածր է, քան բակալավրիատում:

**Գծապատկեր 3.1.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը լսարանային պայմաններից ըստ կրթական աստիճանի**



Շրջանավարտների՝ լսարանային պայմաններից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.1.2-ում:

**Գծապատկեր 3.1.2.**

**Շրջանավարտների՝ լսարանային պայմաններից բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Չնայած որ 2011 թ. լսարանային պայմաններին տրված համեմատաբար ***ցածր*** գնահատականներով էին առանձնանում ***Ռուս բանասիրության***, ***Ռոմանագերմանական բանասիրության***, ***Արևելագիտության*** և ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները, 2012-2013 թթ. նրանց գնահատականները կայուն աճ են գրանցել: Հակառակ պատկերն է ***Մաթեմատիկայի և մեխանիկայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետներում: Լսարանային պայմաններով կայուն բավարարված են ***Իրավագիտության, Հայ բանասիրության և Ռուս բանասիրության*** ֆակուլտետների շրջանավարտները: ***ԵՈՒ և ՏՏԿՀ կենտրոնների*** մագիստրոս

շրջանավարտները հաստատապես բավարարված են լսարանային պայմաններից: ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Տնտեսագիտության և կառավարման*** *ու* ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետների շրջանավարտներն առավել քիչ են բավարարված լսարանային պայմաններից:

Հետաքրքրական է նաև, որ ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետի շրջանավարտները, ընդհանուր առմամբ դրսևորելով գրեթե ամենացածր բավարարվածությունը ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից, *լսարանային պայմանները* գնահատել են բավականին բարձր:

## *3.2. Շրջանավարտների բավարարվածությունը համակարգչային սրահներից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.2.1.), սակայն տարբերությունները ***նշանակալի չեն*** ինչպես 2011 թ., այնպես էլ 2012 և 2013 թթ.: Այսինքն՝ համակարգչային սրահների նկատմամբ շրջանավարտների պահանջները նշանակալիորեն չեն տարբերվում բակալավրիատում և մագիստրատուրայում: Ինչպես երևում է գծապատկերից, բավարարվածությունը կտրուկ աճել է ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ: Ընդ որում՝ գնահատականների կառուցվածքը մագիստրոսների և բակալավրների մոտ փոխվել է նմանատիպ կերպով:

**Գծապատկեր 3.2.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը համակարգչային սրահներից՝ ըստ կրթական աստիճանի**




Շրջանավարտների՝ *համակարգչային սրահներից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.2.2-ում:

**Գծապատկեր 3.2.2.**

**Շրջանավարտների՝ համակարգչային սրահներից բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Համեմատելով 2011 թ. հետազոտության արդյունքների հետ՝ նշենք, որ և՛ 2012 թ., և՛ 2013 թ. ***ՏՏԿՀ կենտրոնը*** և ***Իրավագիտության*** ֆակուլտետն առանձնանում են *համակարգչային սրահներին տրված* ***բարձր*** գնահատականներով: ***Ռուս բանասիրության*** և ***Ռոմանագերմանական բանասիրության, Միջազգային հարաբերությունների, Կենսաբանության, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները համակարգչային սրահներից բավարարվածության

աճ են դրսևորում: ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածությունը աճել է 2011 թ. համեմատ, սակայն 2013 թ. որոշ անկում է ապրել: Հակառակ պատկերն է ***ԵՈՒ կենտրոնում,*** որտեղ 2012 թ. շրջանավարտների բավարարվածությունը կտրուկ նվազել է և չի փոխվել 2013 թ.: Հատուկ պետք է նշել ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետը, որտեղ *համակարգչային սրահներից* բավարարվածությունը ընդհանուր առմամբ համեմատաբար ավելի ցածր է, այն նաև բավականին նվազել է՝ համեմատած 2012 թ. հետ:

Նշենք, որ այդ գնահատականի համար 2012-2013 թթ. նաև նշանակալի գործոն է հանդիսացել *աշխատանքով ապահովվածությունը:* Չաշխատող շրջանավարտները ավելի բարձր գնահատականներ են տալիս, քան նրանց աշխատող ընկերները:

### ***3.3. Շրջանավարտների բավարարվածությունը համացանցի մատչելիությունից***

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.3.1.), տարբերությունները ***նշանակալի չեն:*** Նշենք, որ 2011-2013 թթ. մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *ցածր* են, քան բակալավրիատի շրջանավարտների գնահատականները, սակայն ինչպես երևում է գծապատկերից, 2012-2013 թթ. շրջանավարտների բավարարվածությունը այս ոլորտում կտրուկ աճել է: Եվ ինչպես արդեն նշվել է, 2011-2013 թթ. ***ամենից ավելի*** աճել է համացանցի մատչելիությունից բավարարվածությունը՝ համեմատած ***մնացած բոլոր գնահատականների*** հետ: Արդեն նշվել է նաև, որ այդ հանգամանքը կարելի է կապել պայմանների բարելավման հետ՝ պայմանավորված ԵՊՀ-ում կատարված աշխատանքներով:

**Գծապատկեր 3.3.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը համացանցի մատչելիությունից ըստ կրթական աստիճանի**




Շրջանավարտների` *համացանցի մատչելիությունից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ.` ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.3.2-ում:

**Գծապատկեր 3.3.2.**

**Շրջանավարտների՝ համացանցի մատչելիությունից բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Գծապատկերից երևում է, որ ***Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Աստվածաբանության, Կենսաբանության, Դեղագիտության և քիմիայի, Ռուս բանասիրության, Ռոմանագերմանական բանասիրության, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների բավարարվածությունը լրջորեն աճել է, ինչը չի կարելի ասել ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետի շրջանավարտների մասին, որոնք համեմատաբար ցածր բավարարվածություն են դրսևորում համակարգչային սրահների մատչելիությունից:

Հետաքրքրական է, որ չնայած համացանցի մատչելիության համեմատաբար բարձր գնահատականներին՝ ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտների մոտ այդ հարցում բավարարվածության որոշ նվազում է նկատվում: Նշենք նաև, որ ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները, ընդհանուր առմամբ դրսևորելով գնահատականների իջեցում, համենայնդեպս բավարարվածության կայուն աճ են արձանագրում *համացանցի մատչելիության* առումով: Ընդհանուր առմամբ երեք տարիների ընթացքում որոշ չափով աճել են նաև ***Սոցիոլոգիայի, Տնտեսագիտության և կառավարման, Ռադիոֆիզիկայի***, ***Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտների գնահատականները:

## *3.4. Շրջանավարտների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.4.1.). տարբերությունները ***նշանակալի չեն,*** մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *ցածր* են:

**Գծապատկեր 3.4.1.**

**Ծրջանավարտների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից՝ ըստ կրթական աստիճանի**




Ինչպես երևում է գծապատկերից, և ինչպես արդեն նշվել է, Կարիերայի կենտրոնի դերը շրջանավարտների շրջանում կտրուկ աճել է՝ ի տարբերություն 2011 թ., զիջելով միայն *համացանցի մատչելիությանը*, *լսարանային պայմաններին* և *լաբորատորիաների կահավորմանը* տրված գնահատականներին: Սակայն այս գնահատման դեպքում չկողմնորոշված շրջանավարտների տոկոսը մեծ է:

Ծրջանավարտների՝ Կարիերայի կենտրոնի դերից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ.՝ ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.4.2-ում:

**Գծապատկեր 3.4.2.**

**Շրջանավարտների՝ Կարիերայի կենտրոնի դերից բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Պետք է նշել, որ Կարիերիայի կենտրոնից բավարարվածության առավել մեծ աճ են դրսևորել ***Աստվածաբանության***, ***Միջազգային հարաբերությունների***, ***Սոցիոլոգիայի***, ***Կենսաբանության***, ***Ժուռնալիստիկայի***, ***Ռուս բանասիրության***, ինչպես նաև ***բնագիտական*** ուղղվածության մի շարք ֆակուլտետների շրջանավարտները: Կարիերիայի կենտրոնի գործունեությունը առավել ցածր են գնահատել

***Փիլիսոփայության և հոգեբանության, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

## *3.5. Շրջանավարտների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.5.1.), տարբերությունները ***նշանակալի են,*** մագիստրատուրայի շրջանավարտների տված գնահատականներն ավելի *ցածր* են: Ինչպես տեսնում ենք գծապատկերից, 2012-2013 թթ. շրջանավարտների բավարարվածությունը այս ոլորտում ևս կտրուկ աճել է: Այստեղ ևս բարձր է չկողմնորոշված շրջանավարտների տոկոսը:

**Գծապատկեր 3.5.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից՝ ըստ կրթական աստիճանի**




Շրջանավարտների բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.5.2-ում:

**Գծապատկեր 3.5.2.**

**Շրջանավարտների՝ լաբորատորիաների կահավորանքից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները ըստ ֆակուլտետների**




Նշենք, որ ուսանողների ցածր տեղեկացվածությունը լաբորատորիաների վերաբերյալ պայմանավորված է մասնագիտության բնույթով. այն էական է հիմնականում բնագիտական ֆակուլտետներում: Այդ ֆակուլտետներում լաբորատորիաների կահավորանքի գնահատականները համեմատաբար աճել են, անգամ ***Դեղագիտության և քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները, ովքեր բավականին իջեցրել են գնահատականները, 2013 թ. համեմատաբար ավելի բարձր են գնահատել լաբորատորիաների կահավորանքը, քան 2011 թ.: Լաբո-

բատորիաների կահավորանքը համեմատաբար բարձր են գնահատել և գնահատականի բարձրացման միտում են դրսևորում ***Աշխարհագրության և երկրաբանության, Պատմության, Կենսաբանության, Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

### *3.6. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ գրադարանից*

Ինչ վերաբերում է ***գրադարանին*** տրված գնահատականներին, ապա, ինչպես արդեն նշվել է, դրանք առավել բարձր են և համաստեռ, սակայն բավարարվածության աճի արագությունը ոչ այնքան բարձր է, ինչքան որոշ նշված այլ բնութագրիչներինը:

### *3.6.1. Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.6.1.1.): Գծապատկերից երևում է, որ տարբերությունները ***նշանակալի են.*** մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *ցածր* են: Սակայն ինչպես տեսնում ենք, 2012-2013 թթ. շրջանավարտների բավարարվածությունը այս ոլորտում նս կտրուկ աճել է:

**Գծապատկեր 3.6.1.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց՝ ըստ կրթական աստիճանի**




Հետաքրքիր է նաև, որ մագիստրոսները ավելի քիչ են կողմնորոշված այդ հարցում՝ ի տարբերություն բակալավրների (տե՛ս գծապատկեր 3.6.1.):

Շրջանավարտների՝ *գրադարանի գրականության ժամանակակից լինելուց* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ.՝ ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.6.1.2-ում:

**Գծապատկեր 3.6.1.2.**

**Շրջանավարտների՝ գրադարանի գրականության ժամանակակից լինելուց բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Գծապատկերից երևում է, որ ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները դրսևորել են գրականության ժամանակակից լինելուց բավարարվածության բավականին մեծ աճ: Եվ հակառակը՝ ***ԵՌՒ կենտրոնի*** շրջանավարտները դրսևորում են բավարարվածության կայուն անկում: Դա նաև վերաբերում է ճշգրիտ գիտությունների ուղղվածության ֆակուլտետների շրջանավարտներին (***Ինֆորմատի-***

***կայի և կիրառական մաթեմատիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետներում):

### *3.6.2. Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի կահավորանքից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.6.2.1.). տարբերությունները 2012-2013 թթ. դարձել են ***նշանակալի***. մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականները նշանակալիորեն ավելի *ցածր* են: Սակայն ինչպես երևում է գծապատկերից, 2012-2013 թթ. շրջանավարտների բավարարվածությունը այս ոլորտում ընդհանուր առմամբ աճել է:

**Գծապատկեր 3.6.2.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի կահավորանքից՝ ըստ կրթական աստիճանի**




Շրջանավարտների՝ *գրադարանի կահավորանքից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ.՝ ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.6.2.2-ում:

**Գծապատկեր 3.6.2.2.**

**Շրջանավարտների՝ գրադարանի կահավորանքից բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Նշենք, որ ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները ավելի *բարձր* բավարարվածություն են դրսևորում գրադարանի աշխատանքի տարբեր բնութագրիչներից: Հակառակը՝ ԵՌՒ կենտրոնի շրջանավարտների գնահատականներն անկում են ապրում: ***Մաթեմատիկայի և մեխանիկայի, Դեղագիտության և քիմիայի,***

***Ռադիոֆիզիկայի, Աշխարհագրության և երկրաբանության, Ին-ֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները ցուցաբերում են գրադարանի կահավորանքից բավարարվածության անկում: Միաժամանակ, *բանասիրական* ֆա-կուլտետների շրջանավարտները գրադարանի կահավորանքից բա-վարարվածության աճ են դրսևորում:

### *3.6.3. Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանում սպասարկումից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտ-ների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.6.3.1.): Գծապատ-կերից երևում է, որ տարբերությունները 2012-2013 թթ. դարձել են ***նշա-նակալի***. մագիստրատուրայի շրջանավարտների գնահատական-ներն ավելի *ցածր* են: Սակայն ինչպես տեսնում ենք, 2012 թ. շրջանա-վարտների բավարարվածությունը այս ոլորտում նա աճել է:

**Գծապատկեր 3.6.3.1.**

**Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանում սպասարկումից ըստ կրթական աստիճանի**



Շրջանավարտների՝ *գրադարանում սպասարկումից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ.՝ ըստ ֆակուլտետների ներկայացված է գծապատկեր 3.6.3.2-ում:

**Գծապատկեր 3.6.3.2.**

**Շրջանավարտների՝ գրադարանում սպասարկումից բավարարվածության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Ինչպես տեսնում ենք գծապատկերից, գրադարանային այս բնութագրից շրջանավարտների բավարարվածությունը վերոնշյալ օրինաչափություններին է բավարարում:

## § 4. Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ միջավայրից

Ինչպես արդեն նշվել է, ԵՊՀ միջավայրից շրջանավարտների բավարարվածության աստիճանը, համեմատած մնացած գնահատականների հետ, միջինում ամենաբարձրն է, և այդ օրինաչափությունը պահպանվել է նաև 2012-2013 թթ.:

Ամենաբարձր գնահատականները շրջանավարտները տվել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին (տե՛ս գծապատկեր 4.1.):

**Գծապատկեր 4.1.**

**ԵՊՀ միջավայրին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգը ըստ շրջանավարտների գոհունակության միջին գնահատականների**




Պետք է նշել, որ ըստ գոհունակության գնահատման համեմատաբար ցածր տեղ զբաղեցնող *ուսանողական կառույցների գործունեությունը* և *ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգը* շրջանավարտների կողմից ոչ միանշանակ են գնահատվել, ինչի մասին վկայում են միջին քառակուսային շեղումների

համեմատաբար բարձր արժեքները (մանրամասն տվյալները տե՛ս աղյուսակ 4.1-ում): Դա պայմանավորված է նրանով, որ շրջանավարտների տեղեկացվածությունը այդ կառույցների գործունեության վերաբերյալ համեմատաբար ցածր է եղել, ինչի մասին վկայում է չկողմնորոշված շրջանավարտների բարձր տոկոսը՝ համապատասխանաբար 12.6%, 15.8 % ՝ 2012 թ. և 10 %, 12.4 %՝ 2013 թ.: Ի դեպ՝ 2011 թ. չկողմնորոշվածների տոկոսը ավելի ցածր էր, սակայն նշված բնութագրիչների առումով ևս համեմատաբար բարձր էր (համապատասխանաբար՝ 6 % և 9 %):

**Աղյուսակ 4.1**

**ԵՊՀ միջավայրին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ շրջանավարտների գոհունակության միջին գնահատականների**

| | **Միջին գնահատականը** | Միջին քառակուսային շեղումը | **Միջին գնահատականը** | Միջին քառակուսային շեղումը | **Միջին գնահատականը** | Միջին քառակուսային շեղումը |
|---|---|---|---|---|---|---|
| | **2011 թ.** | | **2012 թ.** | | **2013 թ.** | |
| Գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից | **4,50** | 0,712 | **4.55** | 0.69 | **4.68** | 0.62 |
| Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից | **4,48** | 0,697 | **4.52** | 0.77 | **4.67** | 0.66 |
| Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից | **4,15** | 0,894 | **4.33** | 0.86 | **4.48** | 0.81 |
| Գոհունակությունը ուսանողական կառույցներից | **4,02** | 1,016 | **4.19** | 0.98 | **4.34** | 0.91 |
| Գոհունակությունը ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից | **3,89** | 1,017 | **4.11** | 0.97 | **4.32** | 0.9 |

Հատկանշական է, որ *ԵՊՀ ղեկավարությունից, ֆակուլտետի ղեկավարությունից*, ինչպես նաև *ուսանողական կառույցներից* գոհունակության աստիճանը նշանակալիորեն չի տարբերվում **մագիստրատուրայի** և **բակալավրիատի** շրջանավարտների համար[12]: Պետք է

[12] Նշենք, սակայն, որ 2011 թ. մագիստրոսները *ուսանողների բողոքներին արձագանքելու ընթացակարգից* համեմատաբար ավելի մեծ դժգոհություն էին արտահայտել, քան բակալավրները:

նշել, որ 2013 թ. *մագիստրատուրայի* շրջանավարտների գնահատականները բավականին աճել են և ԵՊՀ միջավայրի բոլոր գնահատականներով գերազանցում են բակալավրիատի շրջանավարտներին: Սակայն հետաքրքրականն այն է, որ ինչպես 2011 թ., այնպես էլ 2012 և 2013 թթ. մագիստրատուրայի շրջանավարտները նշանակալիորեն ավելի *դժգոհ էին ուսանողական կառույցների աշխատանքից,* քան բակալավրիատի շրջանավարտները:

*Պրոֆեսորադասախոսական կազմին բարձր* են գնահատում հատկապես **մագիստրոսները** և **բարձր առաջադիմություն** դրսևորող շրջանավարտները: Հետաքրքրական է նաև, որ *տղաները*՝ ի տարբերություն *աղջիկների*, ավելի *բարձր են* գնահատում *ԵՊՀ միջավայրի* գրեթե բոլոր բնութագրերը, սակայն այդ տարբերությունը 2013 թ. նշանակալի չէ:

Նաև նշենք, որ հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտները հակված են ավելի բարձր գնահատելու ԵՊՀ միջավայրի գրեթե բոլոր բնութագրիչները, սակայն հարկ է նշել նաև, որ այդ համակարգում 2012 թ. պրոֆեսորադասախոսական կազմից բավարարվածությունը ավելի բարձր էր՝ ի տարբերություն 2013 թ.:

Ինչ վերաբերում է տարբեր գործոնների ազդեցությանը այդ գնահատականների վրա, ապա դրանք ներկայացված են ստորև բերված աղյուսակ 4.2-ում:

Աղյուսակ 4.2

**ԵՊՀ միջավայրին վերաբերող բնութագրիչների և տարբեր գործոնների միջև եղած կապի սերտության գնահատականները (Կրամերի գործակցի միջոցով)[13]**

| | Սեռ | | | Կրթական աստիճան | | | Ուսուցման ձև | | Ուսումը շարունակելու ցանկություն | | | Առաջադիմություն | | | Աշխատանքով ապահովվածություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 | 2011 | 2012 | 2013 |
| Բավարարվածությունը ԵՊՀ ղեկավարությունից | - | - | - | - | - | - | 0,1 | 0.1 | - | - | - | - | 0,06 | - | - | 0,06 | 0.05 |
| Բավարարվածությունը ֆակուլտետի ղեկավարությունից | 0,08 | 0,09 | - | - | 0,07 | - | 0,06 | 0.06 | - | - | - | - | 0.05 | - | - | 0,05 | 0.06 |
| Բավարարվածությունը պրոֆեսորադասախոսական կազմից | - | 0,06 | - | - | 0,1 | 0.1 | - | - | 0,08 | - | - | 0,1 | 0,05 | 0.05 | - | - | 0.05 |
| Բավարարվածությունը ուսանողական կառույցներից | 0,08 | 0,07 | - | 0,09 | 0,08 | - | 0,06 | 0.07 | - | - | 0.06 | - | 0.05 | - | - | 0,06 | 0.06 |
| Բավարարվածությունը ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից | - | 0,09 | - | 0,09 | 0,06 | 0.07 | 0,09 | 0.08 | - | - | 0.08 | - | 0,06 | 0.05 | - | 0,07 | 0.06 |

[13] Նշանակալիության աստիճանը վերցվել է 0,05:

## *4.1. Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.1.1), սակայն տարբերությունները ***նշանակալի չեն***: Գծապատկերից նաև պարզ երևում է, որ շրջանավարտների բավարարվածությունը կտրուկ աճել է:

**Գծապատկեր 4.1.1.**

**Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից ըստ կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. տե՛ս գծապատկեր 4.1.2-ում:

**Գծապատկեր 4.1.2.**

**Շրջանավարտների՝ ԵՊՀ ղեկավարությունից գոհունակության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Վերը ներկայացված գծապատկերում ևս դրսևորվում են ընդհանուր միտումները ըստ ֆակուլտետների. աճ է արձանագրվել ***Կենսաբանության, Աշխարհագրության և երկրաբանության, Ֆիզիկայի, Հայ բանասիրության, Ռուս բանասիրության, Տնտեսագիտության և կառավարման*** ֆակուլտետների շրջանավարտների մոտ: ***Սոցիոլոգիայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Դեղագիտության և քիմիայի, Ժուռնալիստիկայի, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտների գնահատականներում փոփոխական միտումներ են գրանցվում: Գնահատականների նվազման

առումով նշենք, որ այստեղ ևս արձանագրվում են գնահատականնե-րի փոփոխման ընդհանուր միտումներ. նվազել են ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների գնահատականները:

Ինչ վերաբերում է ՏՏԿՀ և ԵՈՒ կենտրոնների մագիստրոս շրջա-նավարտների գնահատականների փոփոխություններին, ապա ***ՏՏԿՀ կենտրոնի*** շրջանավարտների մոտ աճ է արձանագրվել, իսկ ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտների մոտ գրանցվել է հակառակ միտում՝ գնահատականները նվազել են:

Պետք է նշել, որ ո՛չ կրթական աստիճանը, ո՛չ սեռը, ո՛չ ուսումը շա-րունակելու ցանկությունը, ո՛չ էլ աշխատելու հանգամանքը նշանա-կալիորեն կապված չեն այս գնահատականների հետ 2011-2013 թթ. հետազոտությունների արդյունքում:

### *4.2. Շրջանավարտների գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտ-ների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.2.1.): Պետք է նշել, որ 2012-2013 թթ. մագիստրոսները սկսել են նշանակալիորեն ավելի բարձր գնահատել ֆակուլտետի ղեկավարությանը՝ ի տարբերություն 2011 թ.: Գծապատկերից նաև պարզ երևում է, որ շրջանավարտնե-րի բավարարվածությունը կտրուկ աճել է, սակայն 2013 թ. բակալավ-րիատի և մագիստրատուրայի միջև նշանակալի տարբերություններ չեն գրանցվել:

**Գծապատկեր 4.2.1.**

**Շրջանավարտների գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից ըստ կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականների միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. տե՛ս գծապատկեր 4.2.2-ում:

**Գծապատկեր 4.2.2.**

**Շրջանավարտների՝ ֆակուլտետի ղեկավարությունից գոհունակության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Պետք է նշել, որ շրջանավարտների գնահատականները 3 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ աճել են կամ միջինում գրեթե չեն փոփոխվել: Այդ միտումը բնորոշ է գրեթե բոլոր ֆակուլտետների շրջանավարտներին: Կարելի է միայն առանձնացնել ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետը, որտեղ արձանագրվել է գնահատականների նվազման միտում: Գնահատականների կտրուկ աճ է արձանագրվել ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետի շրջանավարտների շրջանում: Հարկ է նշել նաև, որ ղեկավարությու-

նից *առավել զոհ են **ՏՏԿՀ կենտրոնի*** մագիստրոս շրջանավարտնե-րը. նրանք 2 տարի շարունակ բարձր գնահատականներ են տվել:

### *4.3. Շրջանավարտների գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.3.1.): Պետք է նշել, որ այս դեպքում ևս 2012 թ. մագիստրոսները սկսել են ***նշանակալիորեն** ավելի բարձր* գնահատել պրոֆեսորադասախոսական կազմին՝ ի տարբերություն 2011 թ.: Այդ իրավիճակը պահպանվել է 2013 թ.: Գծապատկերից նաև պարզ երևում է, որ շրջանավարտների բավարարվածությունը կտրուկ աճել է առավելապես 2013 թ. մագիստրատուրայի շրջանավարտների համար:

**Գծապատկեր 4.3.1.**

**Շրջանավարտների գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից ըստ կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականների միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. տե՛ս գծապատկեր 4.3.2-ում:

**Գծապատկեր 4.3.2.**

**Շրջանավարտների՝ պրոֆեսորադասախոսական կազմից գոհունակության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Կարող ենք փաստել, որ ***պրոֆեսորադասախոսական կազմի*** գնահատականները նաև զգալիորեն կապված են շրջանավարտի *առաջադիմության* հետ բնականոն կերպով, այսինքն՝ բարձր առաջադիմություն դրսևորողները նշանակալիորեն հակված են ավելի բարձր գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմին:

## *4.4. Շրջանավարտների գոհունակությունը ուսանողական կառույցներից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.4.1.), որից կարելի է եզրակացնել, որ 2012 թ. մագիստրատուրայի շրջանավարտներն ավելի *ցածր* էին գնահատել այդ կառույցները: Չնայած որ գնահատականները բարձրացել են 2013 թ., և մագիստրատուրայի շրջանավարտները սկսել են ավելի բարձր գնահատել այդ կառույցները, այնուամենայնիվ տարբերությունները ***նշանակալի չեն:*** Այդ օրինաչափությունը ավելի վառ է արտահայտվել 2011 թ., իսկ 2012 թ. տարբերությունները մագիստրոսների և բակալավրների գնահատականների միջև նվազել են:

Ինչպես նշել ենք, այդ գնահատականներն առանձնանում են շրջանավարտների ցածր տեղեկացվածությամբ. չկողմնորոշված շրջանավարտների տոկոսը բավականին մեծ է:

**Գծապատկեր 4.4.1.**

**Շրջանավարտների գոհունակությունը ուսանողական կառույցներից ըստ կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականների միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. տե՛ս գծապատկեր 4.4.2-ում:

**Գծապատկեր 4.4.2.**

**Շրջանավարտների՝ ուսանողական կառույցներից գոհունակության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Պետք է նշել, որ ***ուսանողական կառույցներից*** բավարարվածությունը գրեթե բոլոր ֆակուլտետների շրջանավարտների շրջանում հիմնականում աճել է, բացառությամբ «ավանդաբար» ավելի ցածր բավարարվածություն դրսևորող ֆակուլտետների շրջանավարտների, ինչպիսին են ***Դեղագիտության և քիմիայի***, ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

### *4.5. Շրջանավարտների գոհունակությունն ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից*

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.5.1.): Տարբերությունները ***նշանակալի են.*** 2011-2012 թթ. մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *ցածր* են: 2011 թ. մագիստրոսների և բակալավրների գնահատականների միջև տարբերությունները արտահայտվել են ավելի վառ, իսկ 2012 թ. նվազել են: 2013 թ. մագիստրոսները սկսել են ավելի բարձր գնահատել այդ ընթացակարգը: Ինչպես նշել ենք, այդ գնահատականներն առանձնանում են շրջանավարտների ցածր կողմնորոշվածությամբ:

**Գծապատկեր 4.5.1.**

**Շրջանավարտների գոհունակությունը ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից ըստ կրթական աստիճանի**




Ըստ ֆակուլտետների՝ գնահատականների միջին արժեքների փոփոխությունները 2011-2013 թթ. տե՛ս գծապատկեր 4.5.2-ում:

**Գծապատկեր 4.5.2.**

**Շրջանավարտների՝ ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից գոհունակության միջին արժեքները ըստ ֆակուլտետների**




Պետք է նշել, որ եթե 2011 թ. ***ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգի*** համեմատաբար ***ցածր*** գնահատականներով առանձնանում էին ***Ֆիզիկայի*** և ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները, ապա 2012-2013 թթ. նրանց գնահատականները բավականին աճել են: Նշված առումով առանձնանում են ***Ռոմանագերմանական բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները, ովքեր բավականին ցածր գնահատական-

ներ են տալիս ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու գործընթացներին:

### *4.6. Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները*

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են կոռուպցիայի 3 հիմնական դրսևորումներ.

- կաշառքի միջոցով գնահատականի ստացում,
- միջնորդի միջոցով գնահատականի ստացում,
- մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատականի ստացում:

Կոռուպցիայի դրսևորումների տոկոսային ցուցանիշները 2013 թ. բավականին նվազել են: Եթե 2011 թ. դրանք չէին գերազանցում 4,8 %-ը և 2012 թ.՝ 5,2 %-ը, ապա 2013 թ. չեն գերազանցել 3 %-ը: Ընդ որում, այդ տոկոսը բոլոր հետազոտություններում վերաբերում է միջնորդի օգնությամբ գնահատական ստանալուն: Կաշառքի շնորհիվ ստացված գնահատականների դեպքերը ողջ ուսումնառության ընթացքում չեն գերազանցել 3,5 %-ը (2011 թ.), 3,4 %-ը (2012 թ.) և 2 %-ը (2013 թ.): Իսկ վճարովի պարապմունքների շնորհիվ գնահատական ստանալու դեպքերը ողջ ուսումնասիրությունների ընթացքում չեն գերազանցել 3,1 %-ը (2011 թ.), 3,6 %-ը (2012 թ.) և 2,9 %-ը (2013 թ.):

Չնայած նրան, որ 2013 թ. ընդհանուր նվազել են կոռուպցիայի նշված դեպքերը, հարկ է նշել, որ մագիստրատուրայում մասնավոր պարապմունքների քանակը գրեթե չի փոխվել՝ համեմատած 2012 թ. հետ, երբ որ այդ թիվը որոշ չափով աճել էր:

Պետք է նշել նաև, որ *մագիստրատուրայում* կաշառքի և վճարովի պարապմունքների դեպքերը նշանակալիորեն ավելի *քիչ* են, քան *բակալավրիատում*:

Գծապատկեր 4.6.1-ում ներկայացված են կաշառքի միջոցով գնահատական ստանալու դեպքերի տոկոսային հարաբերությունները ըստ կրթական աստիճանի 2011- 2013 թթ.:

**Գծապատկեր 4.6.1.**

**Կաշառքի միջոցով գնահատական ստանալու դեպքերի տոկոսային հարաբերությունները ըստ կրթական աստիճանի**




Ինչպես տեսնում ենք գծապատկերում, 2012 թ. աննշան փոխվել է կաշառքի դեպքերի բաշխումն ըստ կրթական աստիճանի: Չնայած որ մագիստրատուրայում կաշառքի դեպքերի թիվը ավելի փոքր է, քան բակալավրիատում, սակայն 2012 թ. այն աճել է՝ ի տարբերություն բակալավրիատի: 2013 թ. կաշառքի դեպքերը նվազել են ինչպես մագիստրատուրայում, այնպես էլ բակալավրիատում:

Պետք է նշել նաև, որ այդ տարբերությունները նշանակալի չեն՝ փոքրաթիվ լինելու պատճառով:

Գծապատկեր 4.6.2-ում ներկայացված են միջնորդի միջոցով գնահատական ստանալու դեպքերի տոկոսային հարաբերությունները ըստ կրթական աստիճանի 2011- 2013 թթ.:

**Գծապատկեր 4.6.2.**

**Միջնորդի միջոցով գնահատական ստանալու դեպքերի տոկոսային հարաբերությունները ըստ կրթական աստիճանի**




Միջնորդի առկայության դեպքերն աննշան չափով աճել են 2012 թ. ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում և նշանակալիորեն նվազել են 2013 թ.:

Գծապատկեր 4.6.3-ում ներկայացված են մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատական ստանալու դեպքերի տոկոսային հարաբերությունները ըստ կրթական աստիճանի 2011- 2013 թթ.:

**Գծապատկեր 4.6.3.**

**Մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատական ստանալու դեպքերի տոկոսային հարաբերությունները ըստ կրթական աստիճանի**




Մասնավոր պարապմունքների առկայության դեպքում ևս հանդես է գալիս վերը արձանագրված օրինաչափությունը. դեպքերն աննշան աճել են 2012 թ. ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում, 2013 թ. նվազել են բակալավրիատում և գրեթե չեն փոխվել մագիստրատուրայում:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե 2011-2012 թթ. կրթական աստիճանը միայն մեկ դեպքում է, որ վիճակագրորեն նշանակալի էր, այն է՝ մասնավոր վճարովի պարապմունքների առկայության համար, իսկ մնացած դեպքերում բակալավրիատում և մագիստրատուրայում նշանակալի տարբերություններ չեն արձանագրվում, ապա 2013 թ. ***մագիստրատուրայում*** նշանակալիորեն ավելի ***փոքր է*** *կոռուպցիայի բոլոր* դրսևորումների թիվը, քան բակալավրիատում: Հատկանշական է նաև, որ վերը նշված դեպքերի քանակը նշանակալիորեն կապված է շրջանավարտի ***առաջադիմության*** հետ: Ընդ որում, որքան *բարձր* է առաջադիմությունը, այնքան այդ *բոլոր* դեպ-

քերն ավելի *քիչ* են արձանագրվում: Այդ օրինաչափությունը պահպանվել է 3 տարիների ընթացքում:

Նաև նշենք, որ *տղաները* կոռուպցիայի դեպքեր ավելի շատ են նշում, քան աղջիկները, մնացած դեպքերում սեռով պայմանավորված՝ տարբերությունը էական չէ:

*Առկա* համակարգում *կոռուպցիայի* դեպքերն ավելի շատ են, քան *հեռակա* համակարգում, և այդ միտումը պահպանվել է 2012-2013 թթ. ընթացքում: Մինչդեռ առավել նշանակալի գործոն է հանդիսանում ֆակուլտետը:

Տվյալներից նաև կարելի է եզրակացնել, որ շրջանավարտների կողմից նշված կոռուպցիայի դեպքերի թիվը խիստ անհամասեռ է դրսևորվել 2011-2013 թթ. համար, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ պատասխանների վրա ազդել են որոշակի գործոններ, որոնք ընդգրկված չէին հետազոտության շրջանակներում: Նաև հարկ է նշել, որ տվյալները վերաբերում են շրջանավարտների՝ կոռուպցիայի սուբյեկտիվ ընկալումներին և պայմանավորված են նաև նրանց ցանկությամբ՝ անդրադառնալ տվյալ իրադարձություններին:

## § 5. Շրջանավարտների՝ ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը

Ընդհանուր առմամբ շրջանավարտները բարձր են գնահատում ԵՊՀ-ում ստացած կրթությունը, ըստ որի՝ գնահատականները համասեռ են. միջին արժեքը 2011 թ. կազմել է 4,35 միավոր, 2012 թ.՝ 4,31 միավոր, իսկ 2013 թ.՝ 4,46 միավոր: ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականի բաշխումը տե՛ս գծապատկեր 5.1-ում:

**Գծապատկեր 5.1.**

**Շրջանավարտների՝ ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը**




Նշենք, որ այս հարցում չկողմնորոշված շրջանավարտների տոկոսը բավականին մեծ է. 2012 թ. այն 13 %-ից ավելի էր, իսկ 2013-ին գերազանցում էր 10 %-ը (տե՛ս գծապատկեր 5.1.):

Հետաքրքրական է, որ ըստ կրթական աստիճանի՝ 2012 թ. տարբերությունները դարձել են ավելի տեսանելի, քան 2011 թ.: Այսինքն՝ ***մա-***

***մագիստրատուրայի*** շրջանավարտների գնահատականները նշանակալիորեն *ավելի բարձր են,* քան բակալավրիատի շրջանավարտների գնահատականները: Ընդ որում, եթե բակալավրիատի շրջանավարտների գնահատականները 2012 թ. իջել են 2011 թ. համեմատությամբ, ապա 2013 թ. գնահատականները երկու կրթական աստիճանների համար էլ աճել են:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության բաշխումն ըստ կրթական աստիճանի տե՛ս գծապատկեր 5.2-ում:

**Գծապատկեր 5.2.**

**Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ում ստացած կրթությունից ըստ կրթական աստիճանի**




Նշենք, որ *ֆակուլտետը* հիմնական գործոն է հանդիսանում այս գնահատականների համար ևս: ԵՊՀ-ում ստացած կրթության միջին գնահատականների բաշխման փոփոխություններն ըստ ֆակուլտետների տե՛ս գծապատկեր 5.3-ում:

**Գծապատկեր 5.3.**

**Շրջանավարտների՝ ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության միջին գնահատականների փոփոխությունները ըստ ֆակուլտետների**




Ինչպես տեսնում ենք գծապատկերում, գնահատականները բաշխվել են ըստ ֆակուլտետների՝ համաձայն վերը նկարագրված ֆակուլտետների դասակարգման:

ԵՊՀ կրթությունից բավարարվածության ընդհանուր գնահատականը նշանակալիորեն կապված է՝

ա) *սեռի* հետ. աղջիկները հակված են ավելի բարձր գնահատականներ տալու ինչպես 2011 թ., այնպես էլ 2012 և 2013 թթ.,

բ) *առաջադիմության* հետ. բարձր առաջադիմություն դրսևորողները բնականաբար ավելի բարձր են գնահատում ստացած կրթությունը ինչպես 2011 թ., այնպես էլ 2012 և 2013 թթ.,

գ) հետաքրքիր է, որ *աշխատաշուկայում ներգրավվածությունը*

2013 թ. *կորցրել է նշանակալիությունը* ԵՊՀ կրթությունից բավարարվածության համար՝ ի տարբերություն 2011-2012 թթ., երբ *մասնագիտական աշխատանքով զբաղվածները* հակված էին տալու ավելի *բարձր* գնահատականներ:

Անհարժեշտ է նշել նաև, որ և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների գերակշռող մասը խորհուրդ կտար շրջապատին կրթություն ստանալ ԵՊՀ-ում (տե՛ս գծապատկեր 5.4.): Ընդ որում, մագիստրատուրայում գնահատականները նշանակալիորեն ավելի դրական են, քան բակալավրիատում:

**Գծապատկեր 5.4.**

**Շրջապատին ԵՊՀ-ում կրթություն ստանալու խորհուրդ տալու բաշխումն ըստ կրթական մակարդակի 2013 թ.**



# Ամփոփում

- Ընդհանուր առմամբ, 2011, 2012 և 2013 թթ. ԵՊՀ շրջանավարտները բավարարված են եղել ԵՊՀ-ում ստացած կրթությունից: Դրա մասին են վկայում շրջանավարտների կողմից տրված գնահատականները, որոնց միջինը գտնվում է «լավ» և «գերազանց» գնահատականների միջև: Հետազոտված 3 տարիների ընթացքում հիմնականում արձանագրվել է բավարարվածության գնահատականների աճ:
- 2011 և 2012 թթ. բակալավրիատն ավարտածների մեծամասնությունը (մոտ 80 %) ձգտում է շարունակելու ուսումը, սակայն 2012 թ. բակալավրների մոտ նկատվում է ուսումը շարունակելու ցանկության որոշակի անկում: 2013 թ. այն նվազել է և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում: Այն ավելի արտահայտված է *Արևելագիտության, Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Պատմության, Սոցիոլոգիայի, Ռուս բանասիրության* ֆակուլտետներում: Իսկ *Աստվածաբանության, Դեղագիտության և քիմիայի, Ժուռնալիստիկայի, Աշխարհագրության և երկրաբանության* ֆակուլտետներում այն ընդհանուր առմամբ աճել է:
- 2011-2013 թթ. մագիստրոսների ավելի քան 40 %-ը ևս ցանկություն ունի շարունակելու ուսումը: Ըստ երևույթին, այդ ցանկությունը հիմնականում պայմանավորված է մագիստրոսների՝ մասնագիտությունը փոխելու ցանկությամբ կամ հարատև կրթության գաղափարի ընկալումներով: Այն ոչ միանման է դրսևորվել տարբեր ֆակուլտետներում. կան ֆակուլտետներ, որտեղ ուսումը շարունակելու ցանկությունը կտրուկ իջել է, և կան ֆակուլտետներ, որտեղ այն կտրուկ բարձրացել է:
- *Մագիստրատուրայի* շրջանավարտները՝ ի տարբերություն բակալավրիատի շրջանավարտների, ավելի շատ են ընդգրկված աշխատաշուկայում: Մագիստրատուրայի շրջանավարտների մոտ կեսը տեղեկացված է իրենց ապագա աշխատանքի մասին:
- *Բակալավրիատի* շրջանավարտների մոտ 1/3-ն աշխատում

էր բուհն ավարտելու պահին: 2013 թ. մոտ 10 %-ով աճել է բակալավր շրջանավարտների ներգրավվածությունը աշխատաշուկայում: Այդ աճը պայմանավորված է հիմնականում ոչ մասնագիտությամբ աշխատող՝ բակալավրիատի շրջանավարտների թվի աճով:

- *Հեռակա* համակարգի շրջանավարտների կեսից ավելին ընդգրկված է աշխատաշուկայում, սակայն նրանց գերակշռող մասը չի աշխատում մասնագիտությամբ:
- *Մասնագիտությամբ* աշխատող շրջանավարտները դրսևորում են համեմատաբար ավելի *բարձր* առաջադիմություն, *ոչ մասնագիտությամբ* աշխատողները՝ համեմատաբար ավելի *ցածր* առաջադիմություն, միջին տեղն են զբաղեցնում չաշխատող շրջանավարտները: Այդ օրինաչափությունը պահպանվում է անցկացված 3 հետազոտությունների տվյալների համար:
- *Գնահատականների օբյեկտիվությունից* ավելի *բարձր* բավարարվածություն են ցուցաբերում *մասնագիտությամբ աշխատող* շրջանավարտները՝ ի տարբերություն ոչ մասնագիտությամբ աշխատողների և չաշխատող շրջանավարտների:
- Պետք է նշել, որ ի տարբերություն 2011 թ.՝ 2012 և 2013 թթ. գրանցվել է շրջանավարտների՝ ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի աճ: Եթե 2011 թ. ապագա աշխատանքի մասին *տեղեկություններ ունեցող* շրջանավարտների տոկոսը մոտ 27 % էր, ապա 2012 թ. այն կազմել է 32 %, իսկ 2013 թ.՝ մոտ 36 % :
- Ընդհանուր առմամբ, բակալավրիատի շրջանավարտներն ավելի *քիչ են տեղեկացված աշխատաշուկայում* իրենց հնարավորությունների մասին, քան՝ մագիստրատուրայի շրջանավարտները, սակայն բակալավրիատում տեղեկացվածության աճի արագությունը ավելի մեծ է՝ համեմատած մագիստրատուրայի շրջանավարտների տեղեկացվածության հետ, որն ընդհանուր առմամբ նշանակալի չի փոխվել:
- Աշխատաշուկայում ընդգրկվածության տեսանկյունից 2013 թ., նախորդ տարիների համեմատությամբ, ավելի խոցելի են

դարձել *Ժուռնալիստիկայի*, *Իրավագիտության*, ինչպես նաև *բնական գիտությունների* ուղղվածությամբ ֆակուլտետների շրջանավարտները: Այդ ֆակուլտետներում նաև նվազել է ապագա աշխատանքի վերաբերյալ շրջանավարտների տեղեկացվածության մակարդակը: Տեղեկացվածության առումով ավելի խոցելի են դարձել *բանասիրական ուղղվածության*, *Փիլիսոփայության և հոգեբանության*, ինչպես նաև *Սոցիոլոգիայի* ֆակուլտետների շրջանավարտները:

- Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ աշխատաշուկայում շրջանավարտների՝ մասնագիտությամբ աշխատելու մակարդակը մեծ փոփոխություններ չի կրել հետազոտվող տարիների ընթացքում, սակայն որոշ ֆակուլտետներում այն համեմատաբար զգալիորեն փոփոխվել է: Միաժամանակ, մասնագիտացվածության աճ է գրանցվել *ՏՏԿՀ կենտրոնի* շրջանավարտների մոտ, և այն աճում է կայուն, բավականին մեծ արագությամբ: Ոչ այդքան արագ, բայց մասնագիտացվածության կայուն աճ է գրանցվում նաև *Սոցիոլոգիայի* ֆակուլտետում:
- *Ֆակուլտետը* գերակշիռ ազդեցություն ունի տրված բոլոր գնահատականների վրա: Գնահատականների համար առկա է «արձագանքի էֆեկտը», երբ խմբի ներսում տրվում են միանման գնահատականներ: Ըստ այդմ՝ առանձնանում են «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներ (գնահատականները հիմնականում գերազանցում են համախմբության միջին գնահատականները), «*ցածր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներ (գնահատականները հիմնականում ավելի ցածր են, քան համախմբության միջին գնահատականները) և «*միջին գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներ (գնահատականները խառն են): 2013 թ. «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետների դասին են պատկանում.
  - **Իրավագիտության ֆակուլտետը** (2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները փոփոխությունների գրեթե չեն ենթարկվել, որոշ չափով աճել են),
  - **Միջազգային հարաբերությունների** ֆակուլտետը (2011 թ.

համեմատությամբ՝ գնահատականները կտրուկ աճել են),

✧ **Աստվածաբանության** ֆակուլտետը (2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները կտրուկ աճել են):

2013 թ. «*ցածր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետների դասին են պատկանում.

✧ **Մաթեմատիկայի և մեխանիկայի** ֆակուլտետը (2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները նվազել են),

✧ **Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի** ֆակուլտետը (2011 թ. համեմատությամբ՝ գնահատականները որոշ չափով աճել են, սակայն համեմատաբար ցածր են),

✧ **Փիլիսոփայության և հոգեբանության** ֆակուլտետը (գնահատականները որոշ չափով աճել են),

✧ **Սոցիոլոգիայի** ֆակուլտետը (գնահատականները կտրուկ աճել են 2012 թ., սակայն 2013 թ. որոշ չափով նվազել են),

✧ **Տնտեսագիտության և կառավարման** ֆակուլտետը (գնահատականները կտրուկ աճել են, սակայն դեռևս ցածր են):

Մնացած ֆակուլտետները պատկանում են «*միջին գոհունակություն դրսևորող*» դասին:

Հետաքրքրական է, որ **ԵՌՒ կենտրոնի** մագիստրոս շրջանավարտները 2011 թ. դասվելով որպես «*բարձր գոհունակություն դրսևորող*»՝ 2012 թ. դրսևորել են գնահատականների կտրուկ նվազում և 2013 թ. պատկանում են «*միջին գոհունակություն դրսևորող*» դասին:

Հակառակ իրավիճակում են **ՏՏԿՀ կենտրոնի** շրջանավարտները, ովքեր 2011 թ. «*ցածր գոհունակություն դրսևորող*» դասից 2012 թ. անցել են «*միջին գոհունակություն դրսևորող*» դաս և պահպանել են իրենց դիրքերը 2013 թ.:

✦ Ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը 2013 թ. աճել է 2011 թ. համեմատությամբ, սակայն այն նշանակալիորեն տարբեր է տարբեր ֆակուլտետների համար: Այն ֆակուլտետների թվին, որտեղ շրջանավարտների բավարարվածության մակարդակի *կայուն աճ* է արձանագրվում (սակայն տարբեր արագությունով), կարելի է դասել՝

- ***Իրավագիտության*** ֆակուլտետը,
- ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետը,
- ***Կենսաբանության*** ֆակուլտետը,
- ***Աստվածաբանության*** ֆակուլտետը,
- ***Տնտեսագիտության և կառավարման*** ֆակուլտետը:

Ծրջանավարտների բավարարվածության *փոփոխական միտումներ* են արձանագրվել՝

- ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետում,
- ***Հայ բանասիրության*** ֆակուլտետում,
- ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետում,
- ***Աշխարհագրության և երկրաբանության*** ֆակուլտետում,
- ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետում,
- ***Դեղագիտության և քիմիայի*** ֆակուլտետում,
- ***Պատմության*** ֆակուլտետում:

Ծրջանավարտների բավարարվածության *կտրուկ նվազում* է արձանագրվել՝

- ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետում (որը 2011 թ. լինելով առավել «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետներից՝ 2013 թ. համեմատաբար ցածր բավարարվածություն է դրսևորում):

✧ 2011-2013 թթ. գնահատականներն աճել են արագացված տեմպով: 2011-2012 թթ. գնահատականները միջինում աճել են 0,1 միավորով, 2012-2013 թթ.՝ 0,2 միավորով, այսինքն՝ 3 տարվա ընթացքում բացարձակ միջին աճը կազմել է 0,3 միավոր: Միջինում *առավել* աճել է շրջանավարտների բավարարվածությունը *ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից, օժանդակ ծառայություններից* (մոտ 0,4 միավոր) և *ԵՊՀ կրթական միջավայրից* (մոտ 0,3 միավոր): *Կրթական ծրագրերից* բավարարվածության աստիճանը աճել է մոտ 0,2 միավորով:

✧ Համեմատած ***կրթական ծրագրերի*** և ***ԵՊՀ ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների*** գնահատականների հետ՝ և՛ 2011 թ., և՛ 2012 թ. շրջանավարտներն ավելի շատ բավարարված են ***ԵՊՀ միջավայրից*** (որտեղ ընդգրկված

են ֆակուլտետների ղեկավարությունը և ԵՊՀ ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական կառույցները և այլն): Շրջանավարտները համեմատաբար քիչ են բավարարված *ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից* (չնայած այն հանգամանքին, որ գնահատականների միջինում աճ է գրանցվել):

- Եՙվ 2011 թ., և՛ 2012 թ., և՛ 2013 թ. շրջանավարտներն առավել բարձր են գնահատել ***պրոֆեսորադասախոսական կազմին*** (միջին արժեքները համապատասխանաբար ըստ տարիների՝ 4,50, 4,55 և 4,68 միավոր), ***ֆակուլտետի ղեկավարությանը*** (միջին արժեքները համապատասխանաբար՝ 4,48, 4,52 և 4,66 միավոր), ***տեսական գիտելիքները*** (միջին արժեքները համապատասխանաբար՝ 4,41 4,43 և 4,55 միավոր):
- Միջինում *առավել* աճել է շրջանավարտների բավարարվածությունը՝
  - ***Համացանցի մատչելիությունից՝*** **0,54** միավոր**ով** (2011-2012 թթ.՝ 0,24 միավորով),
  - ***Լսարանային աշխատանքային պայմաններից՝*** **0,47** միավորով (2011-2012 թթ.՝ 0,16 միավորով),
  - ***Լաբորատորիաների կահավորանքից՝*** **0,46 միավորով** (2011-2012 թթ.՝ 0,23 միավորով),
  - ***Կարիերայի կենտրոնի դերից՝*** **0,46 միավորով** (2011-2012 թթ.՝ 0,17 միավորով),
  - ***Ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից՝*** **0,43 միավորով** (2011-2012 թթ. - 0,22 միավորով),
  - ***Համակարգչային սրահների մատչելիությունից՝*** **0,39 միավորով** (2011-2012 թթ. - 0,16 միավորով),
  - ***Գրադարանի գրականության ժամանակակից լինելուց՝*** **0,35 միավորով** (2011-2012 թթ. - 0,15 միավորով),
  - ***Գործնական հմտություններից՝*** **0,34 միավորով** (2011-2012 թթ.– 0,06 միավորով),
  - ***ԵՊՀ ղեկավարությունից՝*** **0,33 միավորով** (2011-2012 թթ. - 0,17 միավորով),
  - ***Ուսանողական կառույցներից՝*** **0,32 միավորով** (2011-

2012 թթ. - 0,18 միավորով):

- Աճի առավել *մեծ արագությամբ* առանձնանում է բավարարվածությունը ***լսարանային աշխատանքային պայմաններից, Կարիերայի կենտրոնի դերից*** և ***գործնական հմտություններից:***
- 2011-2013 թթ. շրջանավարտներն առավել բավարարված են ուսումնառության ընթացքում տրվող *տեսական գիտելիքներից*: Շրջանավարտների կողմից բարձր են գնահատվել նաև *ամփոփիչ ատեստավորման գնահատման օբյեկտիվությունը, գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը* և *հաճախած դասընթացների օգտակարությունը*: *Գործնական հմտություններից* բավարարվածությունը զիջում է տեսական գիտելիքներից բավարարվածությանը ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Նշենք նաև, որ *գործնական հմտություններից* և *պրակտիկաներից* բավարարվածության աստիճանը ավելի *խնդրահարույց* է *բարձր առաջադիմություն* դրսևորող շրջանավարտների մոտ:
- Առավել աճել են *գիտելիքի գնահատման օբյեկտիվության* գնահատականները, ինչպես նաև *մասնագիտական կարողությունների ձեռքբերման* գնահատականները:
- *Մասնագիտական կարողություններից* բավարարվածությունը առավել *ցածր է մասնագիտությամբ աշխատող* շրջանավարտների մոտ:
- Գ*ործնական հմտություններից* շրջանավարտների բավարարվածությունը և՛ 2011 թ., և՛ 2012 թ., և՛ 2013 թ. էականորեն չի տարբերվում բակալավրիատում և մագիստրատուրայում: Շրջանավարտների՝ *օտար լեզուների գիտելիքներից* բավարարվածությունը 2013 թ., ի տարբերություն 2012 և 2011 թթ., ավելի բարձր է դրսևորվել մագիստրատուրայում:
- Ե՛վ 2011 թ., և՛ 2012 թ., և՛ 2013 թ. մագիստրոսներն ընդհանուր առմամբ կրթական ծրագրերի բնութագրիչներից ավելի բարձր բավարարվածություն են դրսևորել, քան բակալավրները: Սակայն *պրակտիկաների օգտակարությունը* ավելի խոցելի է *մագիստրատուրայում* ի տարբերություն բակալավրիատի:
- Տ*եսական գիտելիքներից, մասնագիտական կարողություն-*

*ների, համապատասխան դասընթացների օգտակարությունից* և *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից* բարձր առաջադիմություն դրսևորած շրջանավարտներն *ավելի շատ են բավարարված*, քան ցածր առաջադիմություն դրսևորածները:

- Եթե 2011-2012 թթ. տեսական գիտելիքներից բավարարվածությունը ավելի բարձր էին գնահատում ուսումը շարունակել ցանկացողները, ապա 2013 թ. այդ շրջանավարտների համար այն նշանակալիորեն չի տարբերվել՝ ի տարբերություն գործնական հմտություններից բավարարվածությանը, որը 2013 թ. նշանակալի է ուսումը շարունակել ցանկացողների համար. ընդ որում՝ վերջիններս հակված են ավելի բարձր գնահատելու *գործնական հմտությունները*:
- Շրջանավարտների՝ ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների վերաբերյալ բավարարվածության առավել մեծ աճ է գրանցվել 2013 թ.: Այսինքն՝ առավել բարձրացել է շրջանավարտների գոհունակությունը ***լսարանային աշխատանքային պայմաններից***, ***համակարգչային սրահների մատչելիությունից, համացանցի մատչելիությունից***, ինչպես նաև ***լաբորատորիաների կահավորանքից*** և ***գրադարանի գրականության ժամանակակից լինելուց:***
- 2011-2013 թթ. ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատականներում առավել մեծ է չկողմնորոշվածների տոկոսը:
- *Գրադարանի* աշխատանքի հետ կապված բավարարվածությունը 2011-2012 թթ. բարձր տեղերը զիջել է ***լսարանային պայմաններից*** բավարարվածությանը, որը առավել բարձր է գնահատվել 2013 թ.: Սակայն գրադարանի աշխատանքի գրեթե բոլոր բնութագրերը շրջանավարտների կողմից գնահատվում են միանշանակ. այդ գնահատականները շրջանավարտների մոտ չեն առաջացրել տարակարծություն 2011-2013 թթ.: Լսարանային պայմաններից բավարարվածությունը 2013 թ. ևս մեծ տարակարծություն չի պարունակել:
- 2011-2013 թթ. հետազոտությունների տվյալներից ելնելով՝

կարող ենք նշել, որ ***մագիստրատուրայի*** շրջանավարտները ընդհանուր առմամբ ավելի *դժգոհ են գրադարանի գրականության ժամանակակից լինելուց, գրադարանի աշխատանքի տարբեր բնութագրերից,* քան բակալավրիատի շրջանավարտները: 2013 թ., ի տարբերություն 2012 թ., մագիստրոսները ավելի դժգոհ են եղել նաև *լսարանային պայմաններից*, սակայն այդ տարբերությունը նշանակալի չէ:

- 2012-2013 թթ. ամենացածր գնահատականները և առավել մեծ չկողմնորոշվածների տոկոս ստացվել են *Կարիերայի կենտրոնի դերի* և *լաբորատորիաների կահավորանքի* գնահատականներից: *Ցածր առաջադիմություն* դրսևորողները, ի տարբերություն 2011 թ. տվյալների, 2013 թ. նշանակալիորեն ավելի բարձր են գնահատել *ուսանողական կառույցների* գործունեությունը և *ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգը*:
- Ըստ առաջադիմության՝ առավել բավարարված խմբերը ***միջին առաջադիմություն*** դրսևորող խմբերն են: Ավելի քիչ բավարարվածություն են դրսևորում միջինից ***բարձր*** և միջինից ***ցածր առաջադիմությամբ*** խմբերը:
- Ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների առումով առավել *բարձր բավարարվածություն* են ցուցաբերել ***ոչ մասնագիտությամբ*** աշխատող շրջանավարտները, առավել *դժգոհ* են եղել ***մասնագիտությամբ*** աշխատող շրջանավարտները:
- ***Առկա ուսուցման համակարգի*** շրջանավարտները հակված են տալու ընդհանուր առմամբ ավելի *ցածր* գնահատականներ, քան ***հեռակա ուսուցման համակարգի*** շրջանավարտները : Նույնը վերաբերում է *նաև ԵՊՀ միջավայրի* գրեթե բոլոր բնութագրիչներին: Սակայն եթե 2012 թ. ***պրոֆեսորադասախոսական կազմից*** բավարարվածությունը ավելի բարձր էր առկա համակարգում, ապա 2013 թ. այն չի պահպանվել:
- 2012 թ. աղջիկներն ընդհանուր առմամբ դրսևորում էին ավելի բարձր բավարարվածություն, քան տղաները, սակայն 2013 թ. հակառակ պատկերն է, չնայած նրան, որ սեռը դադարել է լի-

նել էական գործոն այս հարցում:

- Հատկանշական է, որ *ԵՊՀ* և *ֆակուլտետների ղեկավարությունից*, ինչպես նաև *ուսանողական կառույցներից* գոհունակության աստիճանը նշանակալիորեն չի տարբերվում **մագիստրատուրայի** և **բակալավրիատի** շրջանավարտների մոտ:
- 2013 թ. *մագիստրատուրայի* շրջանավարտների գնահատականները բավականին աճել են և ԵՊՀ միջավայրի բոլոր գնահատականներով գերազանցում են բակալավրիատի շրջանավարտներին: Սակայն հետաքրքրականն այն է, որ ինչպես 2011 թ., այնպես էլ 2012 թ. մագիստրատուրայի շրջանավարտները նշանակալիորեն ավելի *դժգոհ էին ուսանողական կառույցների աշխատանքից, քան* բակալավրիատի շրջանավարտները:
- *Պրոֆեսորադասախոսական կազմին* ավելի *բարձր* են գնահատում **մագիստրոսները**, ինչպես նաև ընդհանուր առմամբ **բարձր առաջադիմություն** դրսևորող շրջանավարտները:
- Կոռուպցիայի դրսևորումների տոկոսային ցուցանիշները բավականին նվազել են 2013 թ.: Եթե նրանք չէին գերազանցում 4,6 %-ը 2011 թ. և 4,8%-ը՝ 2012 թ., ապա 2013 թ. չեն գերազանցում 3%-ը: Մագիստրատուրայում կոռուպցիայի դրսևորման դեպքերը նշանակալիորեն ավելի քիչ են, քան բակալավրիատում:
- Կոռուպցիոն մեխանիզմները համեմատաբար ավելի տեսանելի են *ցածր առաջադիմություն դրսևորող շրջանավարտների* շրջանում: Նման օրինաչափություն արձանագրվել է նաև 2011- 2012 թթ.:
- Կոռուպցիայի դրսևորումների մեջ առավել տարածված է *միջնորդությունը* 2011-2013 թթ.: Չնայած նրան, որ 2013 թ. ընդհանուր նվազել են կոռուպցիայի նշված դեպքերը, հարկ է նշել, որ մագիստրատուրայում *մասնավոր պարապմունքների* թիվը գրեթե չի փոխվել՝ համեմատած 2012 թ. հետ, երբ այդ թիվը որոշ չափով աճել էր:
- *Առկա* համակարգում *կոռուպցիայի* դեպքերը ավելի շատ են, քան *հեռակա* համակարգում, այդ միտումը պահպանվում է երկու տարիների ընթացքում:

### Տվյալների ամփոփումն ըստ ֆակուլտետների

- ***Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ***
  - ✓ Եթե 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ *բարձր* գնահատականներով, և այդ բնութագիրը որոշ չափով պահպանվել էր նաև 2012 թ., ապա 2013 թ. գրանցվել է շրջանավարտների գնահատականների ***կայուն անկում*** գրեթե բոլոր բնութագրերով: 2013 թ. ֆակուլտետը կարելի է համարել որպես «*ցածր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետների խմբի ներկայացուցիչ:
  - ✓ 2011-2012 թթ. ֆակուլտետն առանձնանում էր *օտար լեզուների իմացության* և *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության* համեմատաբար ***ցածր*** գնահատականներով:
  - ✓ 2013 թ. ֆակուլտետը, ընդհանուր համեմատաբար ցածր գնահատականների ֆոնի վրա, առանձնանում էր *լսարանային պայմաններից, համակարգչային սրահներից* և *գրադարանի գործունեության* տարբեր բնութագրերից համեմատաբար ***բարձր*** բավարարվածությամբ:
  - ✓ 2011 թ. համեմատությամբ՝ ֆակուլտետում *նվազել է ուսումը շարունակել* ցանկացող *բակալավրիատի* շրջանավարտների տոկոսը (մոտ 15 %), նաև մոտ 12 %-ով *աճել* է *ուսումը շարունակել* ցանկացող *մագիստրատուրայի* շրջանավարտների թիվը: Ընդհանուր քանակը 2012 թ. նվազել էր մոտ 10 %-ով, սակայն 2013 թ. այն գրեթե չի փոխվել:
  - ✓ Ֆակուլտետի *բակալավրիատի* շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածության աստիճանը *կտրուկ աճել* է: Ֆակուլտետի *մագիստրատուրայի* շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածությունը *որոշ չափով աճել է,* սակայն 2012 թ. այն *նվազել էր:*
  - ✓ Ֆակուլտետը 2011 թ. առանձնանում էր *ապագա աշխատանքի վերաբերյալ* շրջանավարտների *ցածր տեղեկացվածությամբ*, սակայն 2012 թ. այն բավականին աճել է, և 2013 թ. այդ քանակը չի փոխվել:
  - ✓ Ֆակուլտետն առանձնանում է աշխատաշուկայում մասնա-

գիտացվածության *ցածր* աստիճանով: Այն *կայուն նվազման* միտում ունի:

- ✓ Շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *հայալեզու գրականության* տրամադրման հետ 2011-2012 թթ., 2011 թ. նշվել է *պրակտիկաների ավելացման* անհրաժեշտության խնդիրը, իսկ 2012 թ.՝ *գնահատման օբյեկտիվության* խնդիրը:

✧ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ***

- ✓ 2011-2013 թթ. ֆակուլտետն առանձնանում էր *բավարարվածության* համեմատաբար ***ցածր*** *գնահատականներով*:
- ✓ ***2012 թ***. գրանցվել է շրջանավարտների գնահատականների միջին ***աճ***, այն է՝ աճել է բավարարվածությունը *կրթական ծրագրերի* տարբեր բնութագրերից, բացառությամբ *պրակտիկաների օգտակարության* գնահատականների: Աճել է նաև բավարարվածությունը *համակարգչային սրահների մատչելիությունից, ԵՊՀ ղեկավարությունից*: Սակայն ***2013 թ.*** գնահատականներն անկում են ապրել:
- ✓ ***2012 թ***. ֆակուլտետն առանձնանում էր *համակարգչային սրահների մատչելիության,* ինչպես նաև *գրադարանի տարբեր բնութագրիչների* համեմատաբար *բարձր* գնահատականներով, սակայն 2013 թ. այդ միտումը չի դրսևորվում: *Համակարգչային սրահներից* շրջանավարտների բավարարվածությունը համեմատաբար ավելի ցածր է, քան մյուս ֆակուլտետներում, այն նաև բավականին նվազել է ՝ համեմատած 2012 թ. հետ:
- ✓ 2011 թ. համեմատությամբ՝ արձանագրվում է կայուն միտում. ֆակուլտետում անընդմեջ *աճում է ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը (ընդհանուր մոտ 10 %):
- ✓ Ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտների՝ *աշխատաշուկայում ներգրավվածությունը կտրուկ աճել է,* մագիստրատուրայի շրջանավարտների ներգրավվածների թիվը ընդհանուր առմամբ գրեթե չի փոխվել:
- ✓ 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր աշխատաշուկայում

ընդգրկված շրջանավարտների *բարձր մասնագիտացվածությամբ,* 2013 թ. այն գրեթե չի փոխվել:

- ✓ Ֆակուլտետն առանձնանում է ապագա աշխատանքի վերաբերյալ *տեղեկացվածության* բարձր մակարդակով. այն կտրուկ աճել է՝ համեմատած 2011 թ. հետ:
- ✓ Պետք է նշել, որ 2012-2013 թթ. շրջանավարտները չեն արտահայտել հատուկ կարծիքներ և առաջարկներ, մինչդեռ 2011 թ. արձանագրվել են ցանկություններ՝ կապված *գրադարանի աշխատանքների* բարելավման, *մասնագիտական ժամերի ավելացման* և *ակտիվ ուսանողների խրախուսման* հետ:

## ✧ *Ֆիզիկայի ֆակուլտետ*

- ✓ 2011-2013 թթ. ֆակուլտետը շարունակաբար առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***միջին*** և ***ցածր*** գնահատականներով:
- ✓ Ֆակուլտետն առանձնանում էր *կրթական ծրագրերի* տարբեր բնութագրերի համեմատաբար *ցածր* գնահատականներով:
- ✓ Ֆակուլտետում աճել է բավարարվածությունը *համացանցի մատչելիությունից* և *ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգից:*
- ✓ Ֆակուլտետն առանձնանում էր *ֆակուլտետի ղեկավարության* գնահատականների *անկմամբ*:
- ✓ 2011 թ. հետ համեմատած՝ արձանագրվում է կայուն միտում. ֆակուլտետում անընդմեջ ***նվազում*** *է ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը (ընդհանուր մոտ 15 %):
- ✓ Ֆակուլտետում նվազել է *ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության աստիճանը:*
- ✓ Ֆակուլտետում 2013 թ. *կտրուկ նվազել* է բակալավրիատի շրջանավարտների *ներգրավվածությունը աշխատաշուկայում*, այն աճել էր 2012 թ.: Նման պատկեր է գրանցվել մագիստրատուրայի շրջանավարտների մոտ: Սակայն աշխատաշուկայում ֆակուլտետի շրջանավարտների *մասնագի-*

*պացվածության* աստիճանը բավականին *աճել է:*

- ✓ Շրջանավարտներն առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *հայալեզու գրականության* տրամադրման հետ՝ 2011-2012 թթ., 2011 թ. նշվել է *պրակտիկաների ավելացման* անհրաժեշտության խնդիրը, իսկ 2012 թ.՝ գնահատման օբյեկտիվության խնդիրը:
- ✓ Շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *մասնագիտական գրականության պակասի* հետ՝ 2011-2012 թթ., 2011 թ. նշվել է *համացանցի հասանելիության* խնդիրը, իսկ 2012 թ.՝ *գնահատման օբյեկտիվության* խնդիրը:

✧ ***Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ***

- ✓ Եթե 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ *միջին* և *բարձր* գնահատականներով, ապա 2012-2013 թթ. այն առանձնանում էր ***միջին*** և որոշ չափով ***ցածր*** գնահատականներով:
- ✓ Ընդհանուր ցածր բավարարվածության ֆոնի վրա ֆակուլտետն առանձնանում է *տեսական գիտելիքների, ամփոփիչ գնահատման օբյեկտիվության, ֆակուլտետի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի* համեմատաբար *բարձր* գնահատականներով: *Ֆակուլտետի ղեկավարությանը* վերաբերող գնահատականները, ինչպես նաև *համակարգչային սրահների մատչելիության* և *գրադարանում սպասարկման վերաբերյալ* գնահատականները ֆակուլտետում բարձր էին 2011 թ.: Սակայն *օժանդակ ռեսուրսների* գնահատականները որոշ չափով *նվազել* են 2013 թ.:
- ✓ *Ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը փոփոխական է. արձանագրվել է աճ 2012 թ. և նվազում՝ 2013 թ.: Ընդհանուր առմամբ քանակը գրեթե չի փոփոխվել:
- ✓ Ֆակուլտետի շրջանավարտների՝ *աշխատաշուկայում ներգրավվածության աստիճանը* բարձր է և ընդհանուր առմամբ կտրուկ *աճել* է 2011 թ. համեմատ:
- ✓ Ֆակուլտետների շրջանավարտների մոտ *ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության աճ* է արձանագրվել:

- ✓ Շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *ժամանակակից սարքավորումների* տրամադրման հետ՝ 2011-2013 թթ. նաև առանձնանում էր ցանկություն *չանտեսել ուսանողների կողմից արված առաջարկները*, 2011 թ. նշվել է *գործնական պարապմունքների ավելացման* անհրաժեշտության խնդիրը, իսկ 2012 թ.՝ *աշխատաշուկայում ներգրավվելու օժանդակության* խնդիրը:

✧ ***Կենսաբանության ֆակուլտետ***

- ✓ 2011- 2013 թթ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***միջին*** և ***բարձր*** գնահատականներով և ընդհանուր կայուն դրական *աճով*:
- ✓ Ֆակուլտետն առանձնանում էր *օտար լեզուների իմացության*, ինչպես նաև *գրադարանի գրականության ժամանակակից լինելու* համեմատաբար ***ցածր*** գնահատականներով:
- ✓ Աճել է ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածությունը *ԵՊՀ ղեկավարությունից:*
- ✓ Համեմատած 2011 թ. հետ՝ ֆակուլտետում *նվազել է ուսումը շարունակել* ցանկացող ***բակալավրիատի*** շրջանավարտների տոկոսը (մոտ 10 %), սակայն 2013 թ. այն փոքր-ինչ աճել է:
- ✓ 2012 թ. ընդհանուր առմամբ *նվազել է* ֆակուլտետի շրջանավարտների *ներգրավվածությունը* աշխատաշուկայում: Սակայն ֆակուլտետում կայուն աճում է շրջանավարտների *տեղեկացվածությունը* ապագա աշխատանքի վերաբերյալ:
- ✓ 2012 թ. շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *պրակտիկաների ավելացման* և *ժամանակակից սարքավորումների* անհրաժեշտության հետ, նշվել է *գնահատման օբյեկտիվության* խնդիրը: 2011 և 2013 թթ. հատուկ կարծիքներ չեն արձանագրվել:

✧ ***Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ***

- ✓ Եթե 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ *միջին* և *բարձր* գնահատականներով, ապա 2013 թ. առանձնանում էր ***միջին*** և որոշ չափով ***ցածր*** գնահատականներով:

- ✓ Ֆակուլտետն առանձնանում է *տեսական և գործնական գիտելիքների, պրակտիկաների օգտակարությունից, համակարգչային սրահներից և համացանցի մատչելիությունից* բավարարվածության համեմատաբար ***բարձր*** գնահատականներով:
- ✓ Համեմատած 2011 թ. հետ՝ արձանագրվում է կայուն միտում. ֆակուլտետում անընդմեջ *աճում է ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը (ընդհանուր մոտ 15 %):
- ✓ Ֆակուլտետում ընդհանուր առմամբ նվազել է շրջանավարտների ներգրավվածությունը աշխատաշուկայում: Սակայն 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր աշխատաշուկայում ընդգրկված շրջանավարտների *բարձր մասնագիտացվածությամբ,* ինչը և պահպանվել է 2013 թ. և մնում է համեմատաբար բարձր դիրքերում:
- ✓ Շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *աշխատաշուկայում ներգրավվածության ապահովման* հիմնախնդրի, նաև *գնահատականների օբյեկտիվության* և *ուսանողների շահերի պաշտպանման* խնդիրների հետ, 2011 թ. նշվել է *գործնական ժամերի ավելացման* անհրաժեշտության խնդիրը, իսկ 2013 թ.՝ *մասնագիտական գրականությամբ ապահովման* խնդիրը:

✧ ***Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ***

- ✓ Ֆակուլտետում բավարարվածության մակարդակը փոփոխական է: Եթե 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ *միջին* և *բարձր* գնահատականներով, իսկ 2012 թ.՝ *ցածր* և *միջին* գնահատականներով, ապա 2013 թ. զբաղեցրել է հիմնականում ***բարձր*** և ***միջին*** գոհունակության դիրքերը:
- ✓ *Ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը փոփոխական է. արձանագրվել է կտրուկ նվազում 2012 թ. և կտրուկ աճ՝ 2013 թ. :
- ✓ Ֆակուլտետում *աճել է բակալավրիատի* շրջանավարտների՝ *աշխատաշուկայում ներգրավվածությունը*, սակայն այն գրե-

թե չի փոխվել մագիստրատուրայի շրջանավարտների համար:

- ✓ Ֆակուլտետի՝ աշխատաշուկայում ներգրավված շրջանավարտների *մասնագիտացվածության* աստիճանը բավականին բարձր է և աճի միտում ունի: Շրջանավարտների մոտ կայուն աճում է նաև ապագա աշխատանքի վերաբերյալ *տեղեկացվածությունը*:
- ✓ Պետք է նշել, որ 2012-2013 թթ. շրջանավարտները չեն արտահայտել հատուկ կարծիքներ և առաջարկներ, մինչդեռ 2011 թ. արձանագրվել են ցանկություններ՝ կապված *գրադարանների աշխատանքների* բարելավման, *մասնագիտական ժամերի ավելացման* և *ակտիվ ուսանողների խրախուսման* հետ:
- ✓ Շրջանավարտները 2011 և 2013 թթ. առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *պրակտիկաների ավելացման* և *ժամանակակից սարքավորումների* անհրաժեշտության հետ:

✧ ***Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ***

- ✓ Եթե 2011-2012 թթ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***միջին*** և ***ցածր*** գնահատականներով, ապա 2013 թ. այն զբաղեցնում էր «*բարձր գոհունակություն դրսևորող*» ֆակուլտետի դիրքը՝ դրսևորելով ***բարձր*** գնահատականներ:
- ✓ Ֆակուլտետում *կտրուկ աճել* են բավարարվածության գրեթե բոլոր գնահատականները:
- ✓ Համեմատած 2011 թ. հետ՝ արձանագրվում է կայուն միտում. ֆակուլտետում անընդմեջ *նվազում է ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը (մոտ 20 %):
- ✓ Ֆակուլտետն առանձնանում է աշխատաշուկայում շրջանավարտների *ընդգրկվածության կայուն աճով*: Նաև կայուն աճում է շրջանավարտների *տեղեկացվածությունը* ապագա աշխատանքի վերաբերյալ:
- ✓ Ֆակուլտետն առանձնանում է աշխատաշուկայում շրջանավարտների շատ *ցածր մասնագիտացվածությամբ*:
- ✓ Շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝

կապված *պրակտիկաների ավելացման* անհրաժեշտության հետ 2011-2012 թթ., իսկ 2011 թ.՝ *նյութատեխնիկական բազայի բարելավման, մասնագիտական գրականության ավելացման* հիմնախնդիրները: 2012 թ. նշվել է *օտար լեզուների ժամերի ավելացման* խնդիրը: 2012 թ. *շնորհակալական խոսքեր են հասցեագրվել ղեկավարությանը*, իսկ 2013 թ. հատուկ կարծիքներ ընդհանրապես չեն նշվել:

✧ ***Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ***

- Ե՛վ 2011 թ., և՛ 2012 թ., և՛ 2013 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***ցածր*** գնահատականներով, չնայած որ 2012-2013 թթ. արձանագրվել է շրջանավարտների գնահատականների կայուն ***աճ***:
- Ֆակուլտետում որոշ չափով *աճել* է բավարարվածությունը *կրթական ծրագրերի* տարբեր կողմերից, *ԵՊՀ ղեկավարությունից* և մի շարք այլ բնութագրերից:
- Ֆակուլտետում 2011-2012 թթ. *աճել* է *ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը, որը գրեթե կայուն է մնացել 2013 թ.:
- Ֆակուլտետի շրջանավարտների՝ *աշխատաշուկայում ներգրավվածության* աստիճանը *կտրուկ աճել* է 2012 թ. և մնացել գրեթե անփոփոխ՝ 2013 թ.:
- Ե՛վ 2011 թ., և՛ 2012 թ. և՛ 2013 թ. ֆակուլտետն առանձնանում էր աշխատաշուկայում շրջանավարտների *բարձր մասնագիտացվածությամբ*:
- Շրջանավարտները առանձնահատուկ նշել են խնդիրներ՝ կապված *քննությունների կազմակերպման* հետ 2013 թ., 2011 թ. նշվել են *հայալեզու գրականության անհրաժեշտության* հիմնախնդիրները: 2012 թ. նշվել են *պրակտիկաների ավելացման, ժամանակակից սարքավորումների* խնդիրները, նաև տրվել են *շնորհակալական խոսքեր ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին:*

✧ ***Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ***

- 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***միջին*** և ***ցածր*** գնահատականներով: 2012-2013 թթ. այն առանձնացավ շրջանավարտների ***ցածր*** բավարարվածության աստիճանով:
- Ֆակուլտետն առանձնանում է *լսարանային աշխատանքային պայմանների* համեմատաբար *բարձր* գնահատականներով, սակայն այլ օժանդակ ռեսուրսներից՝ *ցածր* բավարարվածությամբ**:**
- Եթե 2011 թ. շրջանավարտները համեմատաբար ավելի *ցածր* էին գնահատում *պրակտիկաների օգտակարությունը* և *փըրվող գործնական հմտությունները,* ապա 2012-2013 թթ. կայուն *աճել* է բավարարվածությունը *փեսական գիտելիքներից, գնահատականների օբյեկտիվությունից, հաճախած դասընթացների* և *պրակտիկաների օգտակարությունից:*
- Ե՛վ 2011 թ., և՛ 2012 թ. շրջանավարտներն ընդհանուր առմամբ համեմատաբար *ցածր* են գնահատել *ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները* (բացառությամբ *լսարանային պայմանների*):
- Ֆակուլտետն առանձնանում է *իր ղեկավարությանը* և *պրոֆեսորադասախոսական կազմին տված* համեմատաբար ***բարձր*** գնահատականներով:
- Ֆակուլտետում 2011-2012 թթ. *նվազել* է *ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը, որը մնացել է կայուն 2013 թ.:
- Շրջանավարտների *ներգրավվածությունը աշխատաշուկայում կայուն աճել է* 2011-2013 թթ., սակայն *բակալավրիատի* շրջանավարտների ներգրավվածությունը աշխատաշուկայում *ցածր է:*
- Շրջանավարտների՝ աշխատաշուկայում իրենց հնարավորությունների մասին *տեղեկացվածությունը կայուն աճում է:*
- *Ցածր* է շրջանավարտների *մասնագիտացվածության* աստիճանը աշխատաշուկայում:
- Շրջանավարտները 2011-2013 թթ. առանձնահատուկ նշել են

խնդիրներ՝ կապված *գրադարանային ֆոնդի հարստացման* և *օդորակիչների* անհրաժեշտության հետ, նաև արվել են առաջարկներ՝ կապված *վարչավճարների նվազեցման* և *բարձր առաջադիմություն ունեցողների խրախուսման* հետ: 2013 թ. արվել են առաջարկներ՝ կապված *կրթական ծրագրերի վերանայման* հետ:

✧ ***Սոցիոլոգիայի ֆակուլտետ***

- ✓ 2011- 2013 թթ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***ցածր*** գնահատականներով:
- ✓ Գրեթե *բոլոր բնութագրիչներով* ֆակուլտետի շրջանավարտների գնահատականները *նշանակալիորեն* ***աճել*** էին 2012 թ., սակայն որոշ անկում են ապրել 2013 թ.:
- ✓ 2011 թ. համեմատությամբ՝ արձանագրվել է կայուն միտում. ֆակուլտետում անընդմեջ *նվազել է ուսումը շարունակել* ցանկացող շրջանավարտների տոկոսը (ընդհանուր առմամբ մոտ 15 %):
- ✓ Ֆակուլտետի շրջանավարտների՝ աշխատաշուկայում ներգրավվածությունը գրեթե չի փոփոխվել, ընդ որում՝ *մագիստրատուրայի* շրջանավարտների ներգրավվածության աստիճանը աշխատաշուկայում համեմատաբար *բարձր* դիրքերում է:
- ✓ Կայուն աճում է շրջանավարտների՝ աշխատաշուկայում *մասնագիտացվածության* աստիճանը, սակայն կայուն անկում է ապրում շրջանավարտների *տեղեկացվածությունը* ապագա աշխատանքի մասին:
- ✓ Շրջանավարտները 2012 թ. առանձնահատուկ նշել են միայն մեկ խնդիր՝ կապված *գործնական պարապմունքների և պրակտիկաների ավելացման* անհրաժեշտության հետ:

✧ ***Հայ բանասիրության ֆակուլտետ***

- ✓ Եթե 2011 թ. ֆակուլտետն առանձնանում էր բավարարվածության ընդհանուր առմամբ ***միջին*** գնահատականներով, ապա 2012 թ. այդ միտումը պահպանվել է, անգամ կարելի է արձանագրել, որ շրջանավարտները դրսևորել են ***միջին*** և ***բարձր*** բավարարվածություն:

- ✓ 2011–2013 թթ. *շրջանավարտները* համեմատաբար ավելի ***ցածր*** են գնահատել *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունը* և *գիտելիքի գնահատման օբյեկտիվությունը, օտար լեզուների իմացությունը, գործնական պարապմունքների օգտակարությունը, համացանցի մատչելիությունը*, ինչպես նաև *Կարիերայի կենտրոնի գործունեությունը*:
- ✓ Ե՛վ 2011 թ., և՛ 2012 թ. *շրջանավարտները* համեմատաբար ավելի *բարձր* են գնահատել *լսարանային պայմանները* և ընդհանուր առմամբ ԵՊՀ *ենթակառուցվածքը*:
- ✓ *Ուսումը շարունակել* ցանկացող *շրջանավարտների* տոկոսը էապես փոփոխություններ չի կրել 2011-2013 թթ., սակայն 2012 թ. ֆակուլտետում *աճել է ուսումը շարունակել* ցանկացող *մագիստրատուրայի* շրջանավարտների տոկոսը (մոտ 12 %):
- ✓ *Բակալավրիատի* շրջանավարտների` *աշխատաշուկայում ներգրավվածության* աստիճանը կայուն *աճում* է, չնայած որ այն բավականին ցածր է:
